

**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝  
2017 Թ. ՄԱՅԻՍԻ14-Ի  
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԴԻՏՈՐԴԱԿԱՆ  
ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑ**

**ԵՐԵՎԱՆ  
ՄԱՅԻՍ . 2018**



Ծրագիրը  
ֆինանսավորվում է  
Եվրոպական  
միության կողմից



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ.....	4
<b>1. ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ .....</b>	<b>5</b>
<b>2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....</b>	<b>6</b>
<b>3. ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ .....</b>	<b>8</b>
<b>4. ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ .....</b>	<b>13</b>
4.1 Դիտորդական առաքելության նպատակները.....	13
4.2 Դիտորդական առաքելության արդյունքները.....	14
4.2.1. Քվեարկության նախապատրաստում .....	15
4.2.2. Քվեարկության ընթացք .....	16
4.2.3 Արդյունքների ամփոփում .....	18
4.2.4 Ընդհանուր բնույթի խախտումներ .....	19
4.3 Բողոքարկում .....	21
Բողոքարկման հետ կապված խոչընդոտների ամփոփ նկարագրություն .....	21
ՏԸՀ լսումների նշանակման հետ կապված խնդիրները .....	21
Բողոքների հետ կապված լսումները ՏԸՀ-ներում .....	23
Բողոքների ներկայացման գործընթացը ԿԸՀ-ում.....	25
<b>5. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ .....</b>	<b>26</b>
<b>6. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....</b>	<b>28</b>
6.1 Ընտրական վարչարարության բարելավում .....	28
6.2 Մրցակցային միջավայրի ապահովում .....	29
6.4 Դիտորդների և ԶԼՄ ներկայացուցիչների իրավունքների ընդլայնում .....	29
6.5 Բողոքարկման գործընթացների արդյունավետության երաշխավորում .....	30
<b>7. ԱՄՓՈՓՈՒՄ .....</b>	<b>31</b>
<b>8. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ .....</b>	<b>.....</b>

*Սույն զեկույցը կազմվել է «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության անդամ կազմակերպության՝ «Իրավունքի Եվրոպա միավորում» իրավապաշտպան հասարակական կազմակերպության կողմից իրականացված դիտորդական առաքելության արդյունքում:*

*Դիտորդական առաքելությունն իրականացվել է Եվրոպական միության ֆինանսավորմամբ՝ «2017թ. խորհրդարանական ընտրությունների հանրային վերահսկողություն» ծրագրի շրջանակներում:*

*Սույն զեկույցի համար պատասխանատվություն է կրում «Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպությունը:*

*Զեկույցը որևէ ձևով չի արտացոլում Եվրոպական միության տեսակետները:*

*«Քաղաքացի դիտորդ» նախաձեռնությունը ձևավորվել է 2013թ.<sup>1</sup> նպատակ ունենալով վերահսկելու համապետական և տեղական ընտրությունները Հայաստանում, և դրանց համապատասխանությունը ներպետական օրենսդրությանն ու ժողովրդավարության միջազգային չափանիշներին: «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության կայքէջն է՝ <https://www.citizenobserver.am/>:*

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ԱԺ	Ազգային ժողով
ԿԸՀ	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
ՍԴ	Սահմանադրական դատարան
ՄԻՊ	Մարդու իրավունքների պաշտպան
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀԿ	Հայաստանի հանրապետական կուսակցություն
ՏԸՀ	Տարածքային ընտրական հանձնաժողով
ՏԸՀ	Տեղամասային ընտրական հանձնաժողով
ԸՕ	Ընտրական օրենսգիրք
ԵԱՀԿ	Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ԺՀՄԻԳ	Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոց
ԻԵՄ	«Իրավունքի Եվրոպա միավորում» ՀԿ
ՔԴՆ	«Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության

## 1. ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

2017 թ. մայիսի 14-ին Հայաստանի հանրապետության մայրաքաղաք Երևանում տեղի են ունեցել ավագանու ընտրություններ, որոնց արդյունքում նաև պետք է ընտրվեր Երևանի քաղաքապետը: Երևանի ամբողջ տարածքը բաժանված է եղել 4 ընտրական տարածքների, դրանք՝ իրենց հերթին՝ 10 տարածքային ընտրական հանձնաժողովների, որոնց սպասարկման տարածքներում ձևավորվել է թվով 474 ընտրական տեղամաս: Ընտրություններին մասնակցել է 1 դաշինք (ԵԼՔ) և 2 կուսակցություն (Հայաստանի հանրապետական կուսակցություն և «Երկիր ծիրանի» կուսակցություն): Դիտորդական առաքելություն է իրականացրել 17 դիտորդական կազմակերպություն, որոնց կազմում՝ 5138 հավատարմագրված դիտորդ<sup>1</sup>: Ընտրությունների արդյունքները վիճարկվել են «Երկիր ծիրանի» կուսակցության կողմից վարչական դատարանում<sup>2</sup>, որն էլ 31.05.2017թ. մերժել է կուսակցության հայցադիմումը:

2017 թ. մայիսի 14-ին տեղի ունեցած Երևանի ավագանու ընտրությունների «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության (ՔԴՆ) շրջանակներում դիտորդություն է իրականացրել «Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպությունը:

Երևանի ավագանու ընտրությունների վերահսկողության գործընթացում «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության (ՔԴՆ) շրջանակներում «Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպությունը ներգրավել է 37 դիտորդ:

Դիտորդական առաքելության ընթացքում դիտորդների կողմից ներկայացվել է 69 հաղորդում, որոնցից 11-ը քվեարկության նախապատրաստական փուլի, 42-ը՝ բուն քվեարկության փուլի, 5-ը՝ արդյունքների ամփոփման վերաբերյալ: Դիտորդների դիտարկումներից միայն 29-ն է գրանցվել ընտրական տեղամասերի գրանցամատյաններում: Այդ հաղորդումները ներառում էին ինչպես կրկնվող, այնպես էլ շարունակական խախտումներ:

Դիտորդների կողմից արձանագրված ընտրախախտումների, ինչպես դիտորդների իրավունքների խախտումների (սուբյեկտիվ), այնպես էլ՝ ընդհանուր (օբյեկտիվ) ընտրական իրավունքի խախտումների վերաբերյալ դի-

<sup>1</sup> <http://res.elections.am/images/doc/dit14.05.17.pdf>

<sup>2</sup> <https://www.azatutyun.am/a/28506512.html>

տորդական առաքելություն իրականացնող կազմակերպության և վերջինիս դիտորդների կողմից թվով 10 ՏԸՀ-ներ է ներկայացվել ընդհանուր առմամբ 19 դիմում-բողոք: Կենտրոնական ընտրական հանձնաժողով (ԿԸՀ) 15 դիմում, Վարչական դատարան՝ 13 հայցադիմում:

Վերոնշյալ խախտումների բնույթը, շղթայական կապն ու տրամաբանությունը վկայում են դրանց համակարգված և համընդհանուր/համատարած բնույթ ունենալու մասին, իսկ դրանց վերաբերյալ արձագանքը կամ, ավելի ճիշտ, դրանց կապակցությամբ արդյունավետ միջոցներ չձեռնարկելու հանգամանքը թե՛ ընտրական վարչարարություն իրականացնող մարմինների՝ ընտրական հանձնաժողովների, թե՛ իրավապահ մարմինների, և թե՛ դատական համակարգի կողմից կարող են վկայել նշված պետական ինստիտուտների՝ իրենց սահմանադրաիրավական գործառույթներն իրականացնելու անկարողության կամ կամքի բացակայության (անկախության բացակայության) մասին:

Դիտորդական առաքելության շրջանակներում դիտարկվել են ընտրական գործընթացի համակարգային բնույթ ունեցող այնպիսի խնդիրներ և խախտումներ, որոնց ազդեցությունն ազատ և արդար ընտրական իրավունքի իրացման և այդ իրավունքի պաշտպանության վրա էական է: Դրանք ներառում են ընտրողների կամքի ազատ ձևավորման և ազատ արտահայտման ապահովման, քվեարկության գաղտնիության ապահովման, վարչական ռեսուրսի օգտագործման (չարաշահման), ընտրական վարչարարություն իրականացնող ընտրական հանձնաժողովների համակարգի գործունեության արդյունավետության, դրանց հասանելիության, հանրային վերահսկողության ինստիտուտի և երաշխիքների, ընտրական վեճերի ոլորտում առկա խնդիրները, այդ թվում՝ ընտրական վեճերով դատարանի մատչելիության և արդյունավետության խնդիրները: Բացի դրանից, վեր են հանվել ինչպես ընտրական օրենսդրության, այնպես էլ՝ առկա օրենսդրության կիրառման հետ կապված խնդիրներ:

Վերը թվարկված խնդիրները լուրջ խոչընդոտ են ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածի իրագործման, սահմանված ազատ ընտրությունների իրավունքի իրացման և Սահմանադրության 7-րդ հոդվածով նախատեսված ընտրական իրավունքի սկզբունքների ապահովման առումով, ինչը հարցականի տակ է դնում ընտրողների ընտրական իրավունքի ազատ իրացումը Երևանի ավագանու 2017 թվականի ընտրությունների միջոցով՝ որպես հետևանք ձևավորելով անվստահություն ընտրությունների և ընտրվող մարմնի նկատմամբ:

## 2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ընտրությունները անց էին կացվում նոր Ընտրական օրենսգրքով<sup>3</sup> (ԸՕ) սահմանված ընթացակարգերով՝ կիրառելով ընտրողների գրանցման տեխնիկական նորամուծություններ:

Սույն զեկույցը տրամադրում է փաստական, անկողմնակալ և անկախ տեսակետ Երևանի ավագանու ընտրությունների գործընթացների մասին՝ արտացոլելով դիտորդական առաքելության արձանագրած հիմնական արդյունքները, ընտրական գործընթացում դիտարկված և արձանագրված խախտումներն ու կեղծիքները: Այս ամենի հիման վրա զեկույցում ներկայացվում է Երևանի ավագանու ընտրությունների վերաբերյալ «Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպության եզրակացությունը, ինչպես նաև առաջարկություններ, որոնք կարող են հիմք հանդիսանալ իրավակիրառ պրակտիկան, ինչպես նաև ընտրական օրենսդրության իրավակարգավորումների թերությունները շտկելու և վեր հանված խնդիրները հաղթահարելու համար:

### *Ձեկույցի հիմնական թիրախ-լսարանն են՝*

- **Ընտրական իրավունքով օժտված քաղաքացին.**
  - **հանրությունը՝** ընդհանուր առմամբ, որն, ըստ էության, հանդիսանում է ցանկացած ընտրությունների դիտորդական առաքելության (հանրային հսկողության) հիմնական «պատվիրատուն» և դրա արդյունքների հիմնական շահառուն.
  - **հասարակական և քաղաքական միավորները,** որոնք շահագրգռված են Հայաստանի ընտրական համակարգի բարելավմամբ և նպատակ ունեն գործուն մասնակցություն ունենալ թե՛ իրավական կարգավորումների մշակման և թե՛ դրանց կիրառման փուլերում.

<sup>3</sup> 2016թ. մայիսի 25-ին ընդունված նոր Ընտրական օրենսգրքը, 30.06.2016 թ. և 20.10.2016 թ. Ընտրական օրենսգրքի փոփոխություններ, որոնցով, ի թիվս այլնի, սահմանվել էր նաև ընտրողների ստորագրված ցուցակների հրապարակման պահանջ:

● **Պետական մարմինները.**

- **ընտրական վարչարարություն իրականացնող մարմինները**, որոնք պատասխանատու և կարևոր դեր ու նշանակություն ունեն ընտրական գործընթացի պատշաճ կազմակերպման և ընտրական իրավունքների ապահովման, ընտրախախտումների դեպքերով արդյունավետ քննության իրականացման և որպես դրա հետևանք՝ ընտրական գործընթացների նկատմամբ հանրային վստահության բարձրացման համար,
- **օրենսդիր և գործադիր իշխանությունը**՝ ի դեմս ԱԺ-ի և կառավարության,
- **իրավապահ մարմինները**, որոնք ՀՀ Սահմանադրությամբ և օրենսդրությամբ իրենց վերապահված լիազորությունների շրջանակում պատասխանատու են հնարավոր իրավախախտումների կանխարգելման, հայտնաբերման և բացահայտման, ինչպես նաև արդյունավետ քննության և պատասխանատվության անխուսափելիության ապահովման համար.
- **դատական իշխանությունը**, որը Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան պատասխանատու է արդարադատություն իրականացնելու համար.
- **իջազգային կազմակերպությունները**, որոնք աջակցում են ժողովրդավարական գործընթացների զարգացմանը և մարդու իրավունքների պաշտպանությանը, և կարիք ունեն լիարժեք պատկերացում կազմելու հայաստանյան ընտրական գործընթացների, ինչպես նաև դրանց բարելավման հնարավոր ուղղությունների վերաբերյալ:

● **Զեկույցը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

- **միջազգային կազմակերպությունները**, որոնք աջակցում են ժողովրդավարական գործընթացների զարգացմանը և մարդու իրավունքների պաշտպանությանը, և կարիք ունեն լիարժեք պատկերացում կազմելու հայաստանյան ընտրական գործընթացների, ինչպես նաև դրանց բարելավման հնարավոր ուղղությունների վերաբերյալ:

- *Ընտրությունների օրենսդրական շրջանակ* բաժինը համառոտ նկարագրում է Երևանի ավագանու ընտրությունների անցկացմանը նախորդած օրենսդրական փոփոխությունները.
- *Դիտորդական առաքելության նկարագրություն* բաժինը ներկայացնում է առաքելության մանրամասները, ներառյալ՝ առաքելության նպատակները, կազմը և մեթոդաբանությունը, ինչպես նաև դրա կազմակերպման ընթացքում տեղ գտած խոչընդոտները.
- *Դիտորդական առաքելության արդյունքներ* բաժինը սույն զեկույցի հիմնական մասն է, որտեղ, ըստ տեսակների և ենթատեսակների, խմբավորված ներկայացվում են դիտորդական առաքելության ընթացքում վեր հանված ընտրական խախտումները և բողոքարկման գործընթացը.
- *Եզրակացություններ և առաջարկություններ* բաժնում ուրվագծված են ընտրական իրավունքի պատշաճ իրականացման համար առաջնահերթ և արմատական լուծում պահանջող այն հիմնախնդիրները, որոնք լրացնում են 02.04.2017թ. Ազգային ժողովի ընտրությունների վերաբերյալ զեկույցում ներկայացված առաջարկները:

### 3. ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

2005 թ. նոյեմբերի 25-ի սահմանադրական փոփոխություններով Երևանին տրվեց համայնքի կարգավիճակ (մինչ այդ այն ուներ մարզի կարգավիճակ), ինչպես նաև նախատեսվեց Երևանում տեղական ինքնակառավարման առանձնահատկությունները օրենքով սահմանելու հնարավորություն (ՀՀ Սահմանադրություն (2005թ. խմբագրությամբ), հոդված 187): 2008թ. դեկտեմբերի 26-ին ՀՀ ԱԺ կողմից ընդունված «ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով սահմանվել են Երևանի քաղաքապետի անուղղակի ընտրություններ՝ յուրաքանչյուր 4 տարին մեկ ուղղակի ընտրությունների միջոցով Երևանի ավագանի ձևավորելու եղանակով: Այս փոփոխությունների հիման վրա են անցկացվել Երևանի ավագանու ինչպես 2009թ., այնպես էլ՝ 2013թ. ընտրությունները:

2015թ. դեկտեմբերի 6-ին կատարված սահմանադրական փոփոխություններով նախատեսված Ընտրական օրենսգրքի մշակման, քննարկման և ընդունման գործընթացը մանրամասն նկարագրվել է 2017թ. ապրիլի 2-ի Ազգային ժողովի ընտրությունների դիտարկման արդյունքում հրապարակված զեկույցով<sup>4</sup>:

Նոր ընտրական օրենսգիրքը Երևանի ավագանու ընտրությունների վերաբերյալ նախատեսում է գրեթե նույն դրույթները, ինչ՝ նախորդը: Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին վերաբերող առանձնահատկությունն այն է, որ ինչպես Երևանի, այնպես էլ ՀՀ երկու այլ քաղաքների՝ Վանաձորի և Գյումրու ավագանու ընտրությունների դեպքում ընտրական օրենսգիրքը նախատեսում է հատուկ՝ ՏԻ մյուս մարմինների ընտրություններից տարբերվող ընթացակարգ:

<sup>4</sup> <https://citizenobserver.am/en/elections/reports>

### 4. ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

#### 4.1. Դիտորդական առաքելության նպատակները.

ՔԴՆ նախաձեռնության շրջանակներում «Իրավունքի Եվրոպա միավորում» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունն իրականացրել է դիտորդական առաքելություն Երևանի ավագանու 2017թ. մայիսի 14-ի ընտրություններին:

Դիտորդական առաքելության նպատակն էր վերահսկել այս ընտրությունների օրինականությունը՝

- Հանրայնացման միջոցով բացահայտել ընտրական գործընթացում տեղ գտած ընտրական իրավունքի խախտումները՝ այդ իրավունքի իրացման, ապահովման և պաշտպանության առումով.
- Արձանագրած խախտումների կապակցությամբ հանդես գալ հանրային գանգատներով՝ դրանց արդյունավետ քննությունն ապահովելու նպատակով.
- Իրականացնել ընտրական իրավունքի սուբյեկտիվ և օբյեկտիվ պաշտպանություն՝ ընտրախախտումների կապակցությամբ բողոքարկման գործընթաց հարուցելով ընտրական վարչարարություն իրականացնող մարմիններում և դատարաններում, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, իրավապահ մարմիններին ներկայացնել հաղորդումներ.
- Ընտրական գործընթացի, ընտրական իրավունքի իրացման և դրա պաշտպանության արդյունավետության վերաբերյալ ձևավորել տեղեկացված, անկախ և անկողմնակալ տեսակետ.
- Ընտրական գործընթացում առկա խնդիրները վերլուծելով՝ օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի տեսանկյունից օրենսդրության և ընտրական գործընթացի բարեփոխման համար ձևակերպել և ներկայացնել առաջարկություններ.
- Գնահատել ներպետական օրենսդրությանն ու միջազգային չափանիշներին ընտրությունների որակի համապատասխանությունը:

## 4.2. Դիտորդական առաքելությունը, մեթոդաբանությունը.

Երևանի ավագանու ընտրությունները գրեթե անմիջապես հաջորդում էին 2017թ. ապրիլի 2-ի խորհրդարանական ընտրություններին, որոնց ժամանակ ՔԴԼ-ն մեծածավալ դիտորդական առաքելություն էր իրականացրել՝ մոտ 3000 դիտորդի կազմով: Բավարար մարդկային և ֆինանսական ռեսուրսներ չունենալու պատճառով՝ ի սկզբանե կասկածի տակ էր դրվել Երևանի ավագանու ընտրություններում «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության՝ դիտորդական առաքելությամբ հանդես գալու հնարավորությունը:

Սակայն «Իրավունքի Եվրոպա միավորում» հկ-ն, կարևորելով հանրային նման կարևորություն ունեցող իրադարձությունը հանրային հսկիչների դիտարկման տակ պահելու անհրաժեշտությունը և ընտրական գործընթացների շրջանակում ջանքերի շարունակականությունը, որոշում կայացրեց կամավորության սկզբունքով (նախատեսելով միայն դիտորդների խրախուսական վճարներ) համեմատաբար փոքրաթիվ դիտորդական առաքելություն իրականացնել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կարճ ժամանակ առաջ իրավաբանների թիմն ու դիտորդներն արդեն իսկ վերապատրաստվել էին ԱԺ ընտրությունները դիտարկելու համար՝ «ԻԵՄ»-ը միայն երկու դասընթաց կազմակերպեց Երևանի ավագանու ընտրությունների թվով 40 դիտորդների համար՝ Երևանի ավագանու ընտրությունների առանձնահատկությունները նրանց փոխանցելու նպատակով: Հիշյալ վերապատրաստումների մեթոդաբանությունը, ընթացակարգն ու ծավալները մանրամասն նկարագրվել են 2017թ. ապրիլի 2-ի Ազգային ժողովի ընտրությունների դիտարկման արդյունքում հրապարակված զեկույցում<sup>5</sup>:

Դիտորդական առաքելության իրավաբանական ուղեկցման նպատակով ձևավորվել է ընտրական գործընթացների ոլորտում վերապատրաստված և փորձառու 10 իրավաբաններից բաղկացած թիմ, որն էլ ԱԺ-ի և Երևանի ավագանու (այս անգամ արդեն կամավորության սկզբունքով) ընտրությունների ժամանակ իրականացված դիտորդական առաքելության ամբողջ ընթացքում նաև խորհրդատու

վություն է տրամադրել դիտորդներին, ինչպես նաև իրականացրել քողոքարկման գործընթացը:

Դիտորդական առաքելության շրջանակներում գործել է նաև վերլուծական խումբ, որն իրականացրել է ստացված տվյալների վերլուծություն՝ բացահայտելու հնարավոր ընտրակեղծիքներն ու այդպիսի ռիսկերը:

Դիտորդական առաքելությանը ներգրավվել է 59 դիտորդ, որոնք Կենտրոնական ընտրական հանձնաժողովում հավատարմագրվել են ԻԵՄ-ի կողմից: Նրանցից քվեարկության օրը դիտորդական առաքելության մեջ ներգրավված է եղել 37-ը: Դիտորդական առաքելության շրջանակներում, բացի «ԻԵՄ»-ից, մասնակցել է նաև «Լոռեցիների միավորում» հասարակական կազմակերպությունը:

Դիտորդական առաքելությունն իրականացվել է տարածքային ընտրական 10 հանձնաժողովների սպասարկման տարածքում թվով 27 ընտրական տեղամասերում և թվով 10 տարածքային ընտրական հանձնաժողովներում: Տեղամասերի ընտրությունը կատարվել է դրանցում գրանցված ընտրողների թվի հիման վրա. ընտրվել են հնարավորինս մեծ տեղամասեր՝ որպես ելակետ դիտարկելով այն, որ ավելի մեծ տեղամասերում խախտումներն ավելի մեծաթիվ կլինեն: Ստորև ներկայացված է ըստ ընտրատարածքների դիտարկված տեղամասերի քանակը.

Վարչական շրջան	Ընտրական տարածք	Տարածքային հանձնաժողով	Դիտարկված տեղամասերի քանակ
Երևան (Ավան, Նոր Նորք, Քանաքեռ Չեյթուն)	1	1-3	8
Երևան (Արաբկիր, Աջափնյակ, Դավթաշեն)	2	4-6	7
Երևան (Մալաթիա-Սեբաստիա, Շենգավիթ)	3	7-8	6
Երևան (Կենտրոն, Նորք-Մարաշ, Էրեբունի, Նուբարաշեն)	4	9-10	6
<b>Ընդամենը</b>			<b>27</b>

<sup>5</sup> <https://citizenobserver.am/en/elections/reports>

Ընտրատեղամասերում դիտորդներն աշխատել են յուրաքանչյուր տեղամասում՝ մեկ դիտորդ սկզբունքով: Ընտրական օրենսդրության հետ կապված խախտումներ դիտարկելիս դիտորդները հաղորդել են համակարգման կենտրոն, միաժամանակ պահանջել, որպեսզի դրանց վերաբերյալ համապատասխան գրանցում կատարվի տեղամասային հանձնաժողովների գրանցամատյաններում և միջոցներ ձեռնարկվեն, հնարավորության դեպքում, դրանք կանխելու կամ դադարեցնելու ուղղությամբ: Դիտորդները ընտրախախտման և դրան տրված արձագանքի վերաբերյալ կարճ հաղորդագրություններով ահազանգել են համակարգող կենտրոն (մոտ 70 ահազանգ): Դիտորդների կողմից ներկայացված ահազանգերի հիման վրա կազմվել են բողոքներ՝ ուղղված համապատասխան ընտրական հանձնաժողովներին:

### 4.3. Դիտորդական առաքելության արդյունքները.

Դիտորդական առաքելության արդյունքում վեր հանված խախտումները և թերությունները ներկայացված են խմբավորված՝ ըստ խախտումների տեսակների: Խախտումների խմբերը ներկայացված են ըստ ժամանակային փուլերի՝ քվեարկության նախապատրաստումից մինչև բողոքարկում: Ձեկույցում ներկայացված են միայն ՔԴԼ շրջանակներում գործունեություն իրականացրած դիտորդների և վերլուծական խմբի կողմից վեր հանված խախտումները, դրանց ընդհանուր բնույթը և վիճակագրությունը: Խախտումների դեպքերի առավել մանրամասն նկարագրությունը ներկայացված է սույն զեկույցի հավելվածներում: Ինչպես զեկույցը, այնպես էլ դրա հավելվածները հասանելի են ՔԴԼ և ԻԵՄ կայքէջերում<sup>6</sup>:

- **Նախընտրական քարոզչություն. (քվեարկությանը նախորդող ժամանակահատվածում արձանագրված խնդիրներ և խախտումներ).**
- **Վարչական ռեսուրսի օգտագործում մեկ կուսակցության օգտին.**

<sup>6</sup> <https://citizenobserver.am/en/elections/reports>

Պետական պաշտոնատար անձանց և համայնքային միջոցների ներգրավումը նախընտրական քարոզչության մեջ էականորեն ազդել է ընտրողների կամքի արտահայտման վրա՝ հաշվի առնելով քարոզչության մասնակից անձանց զբաղեցրած ազդեցիկ դիրքը, սակայն այս հարցը պատշաճ քննության և գնահատման չի ենթարկվել ընտրական վարչարարություն իրականացնող մարմինների, մասնավորապես՝ ԿԸՀ-ի կողմից:

- **Ընտրակաշառք. գանգվածային բաժանում, դրա նկատմամբ պաշտոնատար անձանց և մասնավորապես, իրավապահ մարմինների արձագանքը,**

14.05.2017 թ. Երևանի ավագանու ընտրությունների ընթացքում արձանագրվել են տարբեր դրսևորումներով ընտրակաշառքի բաժանման, դրա խոստումների և/կամ այդպիսի փորձերի դեպքեր, ինչպես նաև ընտրակաշառքի բաժանման մասին ՁԼՄ-ների հաղորդումներ:

Միայն քվեարկության օրը «Ազատություն» ռադիոկայանի լրագրողը Հայաստանի հանրապետական կուսակցության շտաբերից երկուսում հայտնաբերել է քաղաքացիներին գումարի զանգվածային բաժանման դեպքեր<sup>7</sup>: Այդ շտաբերից մեկում հիշյալ լրագրողը նաև ենթարկվել է բռնության<sup>8</sup>: «Հայկական ժամանակ» օրաթերթի լրագրողը նախընտրական շրջանում նույնպես ականատես է եղել ՀՀԿ նախընտրական շտաբում քաղաքացիներին քվեաթերթիկներ և ընտրակաշառք բաժանելու դեպքի, տեսանկարահանել այդ գործընթացն, ինչի արդյունքում շտաբի ներկայացուցիչները խլել են նրա հեռախոսը և վերադարձրել այն՝ միայն նկարահանված նյութերը ջնջելուց հետո<sup>9</sup>:

Ընտրակաշառքի համատարած բաժանման վերաբերյալ բավական աղմկահարույց բացահայտում արեց «ԵԼՔ» կուսակցությունների դաշինքը, որի որոշ անդամներ Տարոն Մարգարյանի Կոմիտաս 56 հասցեում գտնվող շտաբի մոտ գտնվող աղբամանից հայտնաբերել էին որոշ փաստաթղթեր (մոտ 30 էջ), որոնք, դաշինքի ներկայացուցիչները հայտնաբերել էին:

<sup>7</sup> <https://www.azatutyun.am/a/28487012.html>

<sup>8</sup> <https://www.azatutyun.am/a/28487234.html>

<sup>9</sup> <http://armtimes.com/hy/article/112191>



ցիչների պնդմամբ, վկայում էին ընտրակաշառքի՝ զանգվածային, համակարգված և կենտրոնացված կերպով բաժանման մասին<sup>10</sup>: Մասնավորապես, հայտնաբերված փաստաթղթերից մեկում եղել են թիվ 4 տարածքային հանձնաժողովի սպասարկման տարածքում տեղակայված ընտրական յուրաքանչյուր տեղամասում գրանցված ընտրողներին ընտրակաշառք բաժանելու համար պատասխանատու անձանց անունները՝ յուրաքանչյուրին հատկացված ընդհանուր գումարի չափով<sup>11</sup>: Մեկ այլ փաստաթուղթ, ըստ էության, եղել է ընտրակաշառքի բաժանման մանրամասն ուղեցույց<sup>12</sup>: Հայտնաբերված փաստաթղթերից մյուսը, ըստ «ԵԼՔ» դաշինքի, վկայում էր այն մասին, որ ընտրակաշառքի բաժանման գործընթացում ներգրավված է եղել նաև ոստիկանությունը: Նշված փաստաթուղթ ՀՀ 2տաբ է ուղարկվել ոստիկանության ֆաքսի հեռախոսահամարից, որտեղ նշված են եղել ոստիկանների անուն-ազգանուններ, կոչումներ ու պաշտոններ: Խոսքը տվյալ դեպքում ՊՊԾ գնդի աշխատակիցների անուններով կազմված ցուցակի մասին էր, որտեղ նշված էր, թե Երևանի ավագանու ընտրություններում ոստիկաններից ով որքան ծայն պետք է ապահովի ՀՀ-ի համար: ՊՊԾ աշխատակիցների հարցով ՀՀ ոստիկանության պետ Վլադիմիր Գասպարյանի հրամանով ծառայողական քննություն նշանակվեց և որոշ ժամանակ անց կասեցվեց<sup>13</sup>: Նույն օրը, 2017թ. մայիսի 12-ին ՀՀ նախընտրական շտաբը հանդես եկավ հայտարարությամբ, որում ամբողջությամբ հերքեց իր առնչությունը «ԵԼՔ»-ի կողմից հայտնաբերված փաստաթղթերին, իսկ ընտրակաշառք բաժանելու վերաբերյալ «ԵԼՔ»-ի պնդումներն անվանեց ապատեղեկատվություն<sup>14</sup>: Այս միջադեպին անդրադարձավ նաև քաղաքապետի ՀՀ թեկնածու Տարոն Մարգարյանը՝ նշելով, որ ՀՀ կենտրոնական շտաբն արդեն հայտարարություն է տարածել նշվածի առթիվ, որտեղ ներկայացված է իրենց դիրքորոշումը<sup>15</sup>:

<sup>10</sup> Այս գործը հետագայում ստացավ «Չիբլիքս» անվանումը

<sup>11</sup> <http://www.lragir.am/index/arm/0/country/home/153401>

<sup>12</sup> <http://www.armtimes.com/hy/article/111888>

<sup>13</sup> <https://168.am/2017/08/17/830467.html>

<sup>14</sup> <https://armenpress.am/arm/news/890433/hhk-n-koch-e-anum-zerts-mnal-qarozchakan-apatexekatvakan.html>

<sup>15</sup> <http://www.1in.am/2140823.html>

Հիշյալ բացահայտումների կապակցությամբ որևէ արդյունավետ միջոց չձեռնարկվեց և արդյունավետ քննություն չիրականացվեց պետական և ոչ մի մարմնի կողմից, ինչով, ըստ էության, դրսևորվեց հովանավորչություն՝ խրախուսելով և ձևավորելով անպատժելիության մթնոլորտ:

Վերոնշյալ դեպքի առնչությամբ «ԵԼՔ» կուսակցությունների դաշինքը դիմել էր ԿԸՀ՝ պահանջելով դիմել դատարան Երևանի ավագանու առաջիկա ընտրություններին ՀՀ գրանցումն ուժը կորցրած ճանաչելու հայցով: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 12.05.2017թ. մերժել էր «ԵԼՔ» դաշինքի ներկայացրած դիմումը<sup>16</sup>: Հիշյալ որոշման դեմ դաշինքը հայց ներկայացրեց Վարչական դատարան, որը սակայն կարճեց ԿԸՀ որոշումն անվավեր ճանաչելու և Երևանի ավագանու մայիսի 14-ի ընտրություններում ՀՀ ցուցակի գրանցման ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ «ԵԼՔ» դաշինքի հայցի քննությունը՝ ժամկետը սպառվելու պատճառաբանությամբ. դատարանը քվեարկության օրվա նախօրեին միայն ժամը 23:35 էր վարույթը ընդունել դիմումը: 13.05.2017թ. ժամը 17:55 Վարչական դատարանը վերադարձրել էր մուտքագրված հայցը՝ որպես հիմք նշելով, որ լիազոր ներկայացուցիչը չի կցել լիազորությունները հաստատող փաստաթուղթը<sup>17</sup>:

Նշվածի առնչությամբ ՀԲԾ-ն հարուցել է քրեական գործ, որը, սակայն, կարճ ժամանակ անց, կարճվել է<sup>18</sup>:

Վերը շարադրված դեպքերը ավելի քան բավարար էին, որպեսզի ԿԸՀ-ն իր հերթին արդյունավետ միջոցներ ձեռնարկեր այս դեպքերի կապակցությամբ ու ձեռնամուխ լինել դրանց ազդեցության գնահատմանը և ընտրությունների արդյունքների վրա դրանց ազդեցության չեզոքացման հարցին, իսկ գլխավոր դատախազությունն էլ սկսեց օրենքով նախատեսված ընթացակարգով միջոցներ ձեռնարկել այդ հրապարակումների կապակցությամբ (ընտրակաշառքի

<sup>16</sup> <https://www.azatutyun.am/a/28483127.html>

<sup>17</sup> <https://www.azatutyun.am/a/28486372.html>

<sup>18</sup> <http://shamshyan.com/hy/article/2017/08/17/1074939/>

փաստով քրեական գործի հարուցում և օպերատիվ հետախուզական անհրաժեշտ գործողությունների ձեռնարկում):

14.05.2017թ. անցկացված քվեարկության արդյունքների համաձայն՝ Արաբկիր համայնքում ՀՀԿ-ն ստացել էր 22 609 քվե<sup>19</sup>:

Երևանի ավագանու 2017թ. մայիսի 14-ի ընտրությունների նախընտրական քարոզարշավի ընթացքում «ԵԼՔ» դաշինքը հանդես եկավ մեծ հանրային քննարկում առաջացրած առաջարկով՝ խոստանալով, որ եթե «ԵԼՔ»-ը Երևանի ավագանում ստանա մեծամասնություն, 15 հազար դրամ սոցիալական աջակցություն կտրամադրի բոլոր այն ընտրողներին, ովքեր կիրառվեն բաժանվող և պարտադրվող ընտրակաշառքից<sup>20</sup>:

- **Քվեարկության նախապատրաստում.**

Քվեարկության նախապատրաստման փուլի շրջանակներում արձանագրվել է ընդհանուր առմամբ 11 խախտում (դիտարկված բոլոր խախտումների 16%-ը)՝ 11 տեղամասում (դիտարկված բոլոր տեղամասերի 40%-ը):

- **Քվեարկության սենյակի կահավորում.**

Քվեարկության նախապատրաստման փուլում ամենից հաճախ հանդիպող խախտումները կապված են եղել քվեարկության սենյակի սխալ կահավորման հետ: Ընդհանուր առմամբ, գրանցվել է 5 նման խախտում 5 տեղամասում, որոնցից 1-ը վերաբերել է քվեարկության սենյակի ոչ պատշաճ կահավորմանը, ինչը հնարավորություն չի տվել կամ դժվարացրել է դիտորդների կողմից քվեարկության գործընթացին և հանձնաժողովի աշխատանքներին հետևելը՝ քվեարկության ողջ գործընթացն արդյունավետ դիտարկելու համար: Քվեախցիկների քանակի և դասավորության հետ կապված

<sup>19</sup> <http://www.elections.am/council/election-27340/>

<sup>20</sup> <http://www.aravot.am/2017/05/08/883961/>

խնդիրներ արձանագրվել են 4 տեղամասերում, քվեախցիկներից առնվազն մեկը տեղադրված է եղել այնպես, որ հնարավոր է եղել վերահսկել/դիտարկել քվեախցում քվեարկություն կատարող ընտրողին: Դրանցից 2-ի դեպքում դիտորդի՝ հանձնաժողովին տեղեկացնելուց հետո, խախտումը վերացվել է: Հիշյալ 5 խախտումներից միայն 1-ն է գրանցվել տեղամասային հանձնաժողովի գրանցամատյանում, այն էլ՝ դիտորդի պահանջից տևական ժամանակ անց: Այնուամենայնիվ, կատարված գրառումը ամբողջությամբ չի արտացոլել դիտորդի գնահատականը խախտման վերաբերյալ:

- **Տեղամասային հանձնաժողովի աշխատակարգ.**

Քվեարկության նախապատրաստման փուլում ընդհանուր առմամբ գրանցվել է 3 նման խախտում՝ 3 տեղամասերում, որոնցից 2 դեպքը կապված է եղել հանձնաժողովի անդամների միջև աշխատանքային պարտականությունների բաշխման վիճակահանության կարգի խախտումների հետ: 3-րդ խախտումը դրսևորվել է գրանցամատյանը պատշաճ կերպով չլրացնելու տեսքով: Մասնավորապես, դրանում չի գրանցվել, թե վիճակահանության արդյունքում հանձնաժողովի անդամներին ինչ գործառույթներ են բաժին հասել: Ընդհանուր առմամբ, գրանցված 3 խախտումներն էլ չեն վերացվել, սակայն դրանց վերաբերյալ կատարվել են համապատասխան գրառումներ տեղամասային հանձնաժողովի գրանցամատյանում:

- **Քարոզչական նյութերի առկայություն տեղամասում.**

Քվեարկության սենյակում կամ տեղամասի տարածքում քարոզչական նյութերի առկայության հետ կապված գրանցվել է 2 խախտում 2 տեղամասում, որոնք չեն վերացվել դիտորդի դիտողությունից հետո: Դրանց վերաբերյալ նաև չի կատարվել համապատասխան գրանցում տեղամասի գրանցամատյանում:

- **Քվեարկություն**

Դիտորդական առաքելության ընթացքում վերհանված խախտումների մեծամասնությունը գրանցվել է բուն քվեարկության ընթացքում: Այս փուլում արձանագրվել է ընդհանուր առմամբ 42 խախտում (դիտարկված բոլոր խախտումների 60.8%-ը)՝ 17 տեղամասում (դիտարկված բոլոր տեղամասերի մոտ 63%-ը):

- **Ընտրողների ուղղորդում.**

Դիտորդների կողմից արձանագրվել է ուղեկցման և ուղղորդման 10 ահազանգ թվով 9 տեղամասերից՝ ցրված 7 տարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքներում (թիվ՝ 2, 3, 4, 5, 7, 10 տարածքներ), որոնցից 6-ի դեպքում ուղղորդումներն իրականացվել են տեղամասում գտնվելու իրավունք ունեցող անձանց՝ հանձնաժողովի անդամների, վստահված անձանց և տարբեր դիտորդների կողմից, իսկ 4-ի դեպքում՝ կարգավիճակ չունեցող, կամ կարգավիճակը չպարզված անձանց կողմից: Հիշյալ դեպքերից 9-ում արձանագրվել է, որ ուղղորդումները կատարվել են ՀՀԿ-ի օգտին (բացահայտված դեպքերի 90%), իսկ 1-ի պարագայում ուղղորդումը կատարվել է «ԵԼԲ» դաշինքի օգտին (բացահայտված դեպքերի 10%-ը): Ընդ որում, հիշատակված խախտումները եղել են շարունակական, կրկնվող: Նշված դեպքերից միայն 5-ն է գրանցվել տեղամասի գրանցամատյանում: Մեկ դեպքում կազմվել է արձանագրություն՝ ուղեկցման և ուղղորդման դեպքերի վերաբերյալ, որը ստորագրել է նաև «ԵԼԲ» դաշինքի վստահված անձը:

- **Քվեարկության գաղտնիության խախտում, Քվեարկության նկատմամբ հսկողություն.**

Քվեարկության գաղտնիության խախտման վերաբերյալ ստացվել է 10 հաղորդում՝ թվով 7 տեղամասերից՝ ցրված 6 Տարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքներում (թիվ՝ 1, 2, 5, 7, 8, 9, 10 ՏՀՀ-ներ): Դեպքե-

րից 5-ը կապված է եղել ընտրողի քվեարկության գաղտնիության խախտման հետ. դեպքերից 3-ը արտացոլվել է տեղամասի գրանցամատյանում: Մնացած դեպքերն առնչվել են քվեարկության նկատմամբ հսկողությանը, որոնցից միայն 1-ն է գրանցվել տեղամասերի գրանցամատյաններում:

- **Քվեարկության պարագաների հետ կապված խնդիրներ.**

Դիտարկվել է 7 դեպք 5 տեղամասերում դեպքերից 5-ն արտացոլվել է տեղամասի գրանցամատյանում: Գրանցված դեպքերը կապված են եղել քվեաթերթիկ դուրս հանելու կամ ներս բերելու հետ: 1 դեպքում ժամը 18:30 դրությամբ պարզվել է, որ քվեատուփը սահմանված կարգով կնքված չէ, մեկ այլ դեպքում ընտրողների կողմից ստորագրվող ցուցակում հայտնաբերվել են մահացած անձի տվյալներ:

- **Բազմակի քվեարկություն, կամ այլ անձի փոխարեն քվեարկություն, այլ անձի փոխարեն ստորագրություն դնելու, ինչպես նաև կրկնաքվեարկություն.**

Դիտարկվել է այլ անձի փոխարեն ստորագրություն դնելու, ինչպես նաև կրկնաքվեարկության փորձի 2 դեպք 2 տեղամասում թվով 2 ՏՀՀ-ների սպասարկման տարածքներում (թիվ 4 և 7 տարածքներ), որոնք արտացոլվել են տեղամասերի գրանցամատյաններում: Մեկ դեպքում այլ ընտրողի օգնելու նպատակով տեղամաս եկած անձը փորձել է երկրորդ անգամ գրանցվել ընտրողների գրանցման տեխնիկական սարքով: Մյուս դեպքում անձը ընտրողների ցուցակում ստորագրել է այլ անձի անվան դիմաց:

- **Տեղամասային հանձնաժողովի աշխատակարգ.**

Քվեարկության ընթացքում ահազանգվել է աշխատակարգի խախտման 1 դեպք հանձնաժողովի անդամների հերթափոխի (ռոտացիա) խախտման վերաբերյալ: Խախտումը, ինչպես նաև խախտման վերաբերյալ դիտորդի գնահատականը չի գրանցվել գրանցամատյանում:

- **Օգնության կարգի խախտում.**

Դիտարկվել է ընտրողին քվեարկելու օգնության կարգի խախտման 2 դեպք 2 տեղամասերում, թվով 2 ՏԸՀ սպասարկման տարածքներում (թիվ 1 և 2 տարածքներ): Խախտումները չեն գրանցվել տեղամասի գրանցամատյաններում: Այս ինստիտուտի չարաշահման և խախտումների հիմնական էությունն այն է, որ օգնողի ինստիտուտը կիրառվում է քվեարկության նկատմամբ հսկողություն սահմանելու նպատակով (գաղտնիության խախտում, կամ այդպիսի պատճառների ստեղծում, կամ հենց օգնություն ստացող անձի փոխարեն քվեարկություն): Հաճախ այն կիրառվում է նաև օգնության կարիք չունեցող ընտրողների նկատմամբ՝ առանց այդպիսի օգնության անհրաժեշտության առերևույթ առկայության պարզման (որպիսի մեխանիզմ օրենքը չի նախատեսում): Օգնողի ինստիտուտի կիրառումը զուգորդվել է օգնող անձի տվյալները գրանցամատյանում չգրանցելով:

- **Կողմնակի անձանց ներկայություն տեղամասում.**

Թե՛ քվեարկության ընթացքում և թե՛ առանձին դեպքերում անգամ քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ կողմնակի անձանց ներկայությունը տեղամասերում լայն տարածում է ունեցել: Դիտորդներն արձանագրել են 6 դեպք 5 տարբեր տեղամասերում (դիտարկված բոլոր տեղամասերի մոտ 18.5%-ը): Հանձնաժողովի նախագահը և ոստիկանությունը միջոցներ չեն ձեռնարկել կողմնակի անձանց ներկայությունը չթույլատրելու և ընտրական օրենսդրության պահանջների կատարումն ապահովելու ուղղությամբ: Նշված դեպքերից միայն 2-ն են արձանագրվել տեղամասային գրանցամատյաններում:

- **Մարդկանց և մեքենաների կուտակումներ.**

Դիտորդների կողմից արձանագրվել է տեղամասերում և դրանց հարակից (50 մետր շառավղով) տարածքներում

մարդկանց և մեքենաների կուտակումների մասին 3 ահազանգ 3 տեղամասերից՝ 3 տարբեր ՏԸՀ սպասարկման տարածքներում (թիվ 4, 5 և 9 տարածքներ): Հանձնաժողովի նախագահները և ոստիկանությունը բավարար միջոցներ չեն ձեռնարկել ընտրական օրենսդրության պահանջների կատարումն ապահովելու ուղղությամբ: Նշված դեպքերը չեն արձանագրվել տեղամասային գրանցամատյաններում:

Այս դեպքերի կարևորությունն այն է, որ դրանք փոխկապակցված են ընտրողների քվեարկությունը վերահսկելու նպատակով համակարգված տեղափոխումների և ուղղորդումների հետ:

- **Այլ խախտումներ**

Ի լրումն ներկայացված խախտումների՝ քվեարկության ընթացքի հետ կապված հաղորդվել են տարբեր տեսակի այլ խախտումներ ևս: Դրանք ներառել են գունավոր գրիչներով նշումների կատարում (ընդհանուր առմամբ 163 քվեաթերթիկ՝ կարմիր, կանաչ, սև, նարնջագույն նշումներով, ընդ որում, այդ քվեաթերթիկների մեծամասնությունը քվեարկված էր ՀՀԿ-ի և Տարոն Մարգարյանի օգտին), դիտորդական առաքելություն իրականացնող այլ կազմակերպության դիտորդի կողմից ընտրությանը մասնակցող կուսակցություններից մեկին աջակցություն, չկնքված քվեարկության կտրոններ, թեկնածուի ներկայություն քվեարկության սենյակում, էլեկտրոնային գրանցման սարքերի տրամադրած կտրոններում արձանագրված ընտրողների հերթական համարների անհամապատասխանություն թղթային ցուցակի հերթական համարներին և այլն:

- **Ընտրողների էլեկտրոնային գրանցման սարքավորումների հետ կապված խնդիրներ.**

Դիտորդների կողմից արձանագրվել է տեխնիկական սարքավորումների էլեկտրոնային ցուցակների և ընտրողների

ստորագրվող ցուցակների միջև անհամապատասխանության դեպք, ինչպես նաև տեխնիկական սարքավորման կողմից տպված տեղեկանքում նշված քվեարկության մասնակիցների ընդհանուր թվի և ընտրողների կողմից ստորագրված ցուցակներում ստորագրությունների թվի անհամապատասխանության դեպք:

- **Արդյունքների ամփոփում.**

Արդյունքների ամփոփման փուլում գործընթացների առնչությամբ արձանագրվել է 5 խախտում (դիտարկված բոլոր խախտումների մոտ 7.2%-ը) 3 տեղամասում (դիտարկված բոլոր տեղամասերի 11%-ը):

- **Քվեարկության արդյունքների ամփոփման կարգի խախտումներ.**

Այս խմբի խախտումները ներառել են արդյունքների հաշվարկի գործողությունների հերթականության խախտման 2 դեպք, քվեաթերթիկների տեսակավորման կարգի խախտման 1 դեպք, ծրարի մեջ ավելորդ պարագաների առկայության 1 դեպք, քվեարկության պարագաների փաթեթավորման կարգի խախտման 1 դեպք:

Քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ դիտարկված տեղամասերից 2-ում ընտրական օրենսգրքով սահմանված գործողությունների հաջորդականությունը խախտվել է. մասնավորապես, նախ՝ տպվել են ընտրողների գրանցման էլեկտրոնային սարքավորումների տեղեկանքները, որից հետո են միայն հաշվարկվել ընտրողների ցուցակներում ստորագրությունները, այնինչ ընտրական օրենսգրքը նախատեսում է հակառակ հերթականություն: Տեղամասերից մեկում ընտրական հանձնաժողովի քարտուղարն սկսել է լրացնել քվեարկության արդյունքների արձանագրությունն այն դեպքում, երբ քվեաթերթիկների տեսակավորման գործընթացը դեռ չէր ավարտվել և դրանք դեռ չէին հաշվարկվել:

Մեկ այլ տեղամասում ընտրական հանձնաժողովի նախագահի փոխարեն քվեատուփից քվեարկության ծրարները հանելու, դրանց միջից քվեաթերթիկները հանելու և քվեարկությունը հայտարարելու գործընթացն իրականացրել է տեղամասային կենտրոնում ներկա դիտորդներից մեկը: ԻԵՄ-ի դիտորդի դիտողությանն ի պատասխան հանձնաժողովի նախագահն ասել է, որ այդպես ավելի արագ կընթանա քվեարկության արդյունքների ամփոփման նիստը: Երբ ԻԵՄ-ի դիտորդը պահանջել է գրանցել խախտումը գրանցամատյանում, քվեարկության ծրարները բացող և քվեաթերթիկները տեսակավորող դիտորդը փոխարինվել է հանձնաժողովի անդամներից մեկով, իսկ վերոնշյալ դիտորդը նստել է հանձնաժողովի անդամներից մեկի մոտ և իր մոտ հավաքել քվեաթերթիկների տրցակներից մեկի մոտ և իր մոտ հավաքել քվեաթերթիկների տրցակներից մեկը: Նույն դիտորդը մինչև վերջ մնացել է ընտրական տեղամասում և օգնել տեղամասային ընտրական հանձնաժողովին կատարել իր աշխատանքները, այդ թվում՝ փաթեթավորել ընտրական պարագաները և դրել պարկի մեջ:

- **Դիտորդների իրավունքների (սուբյեկտիվ) խախտումների մասով.**

Արձանագրվել է դիտորդների իրավունքների 32 խախտում: Դրանցից 10-ը վերաբերել են դիտարկման իրավունքին. մի քանի տեղամասերում խախտվել է դիտորդի նախապատրաստական նիստին մասնակցելու իրավունքը, եղել են սահմանափակումներ ընտրական փաստաթղթերին ծանոթանալու և սահմանափակումներ տեղամասում ազատ տեղաշարժվելու առումներով և այլն: Ընդ որում, այս խախտումներից միայն 4-ն են (10%) գրանցվել տեղամասերի գրանցամատյաններում:

- **Ճնշումներ և բռնություն դիտորդների նկատմամբ, վիրավորանք.**

Դիտորդների կողմից արձանագրվել է դիտորդների նկատմամբ ճնշումների, բռնության և վիրավորանքի ընդհանուր

առմամբ 7 ահազանգ, ընդհանուր 3 տարբեր տեղամասերում՝ ներառյալ սպառնալիք, ֆիզիկական բռնություն, հոգեբանական ճնշման և սպառնալիքների կիրառում դիտորդների նկատմամբ, հայիոյանք և վիրավորանք: Հատկանշական է, որ նշված դեպքերից և ոչ մեկը չի արձանագրվել տեղամասերի գրանցամատյաններում:

Այսպես, արձանագրվել է երկու դեպք, երբ հարվածել են դիտորդի տեսախցիկին՝ փորձելով խոչընդոտել նրա կողմից իրականացվող տեսանկարահանումը: Մեկ դեպքում ՀՀԿ վստահված անձը դռնով հարվածել է դիտորդի մեջքին: Արձանագրվել է դիտորդին վիրավորելու, նրա արժանապատվությունը նսեմացնելու միջոցով վերջինիս վրա ճնշում գործադրելու երկու դեպք, դիտորդին հայիոյելու մեկ և սպառնալու երկու դեպք:

- **Դիտորդի գնահատականի արձանագրման մերժում.**

Դիտորդների կողմից արձանագրվել է դիտորդի պահանջով իր դիտարկումը գրանցամատյանում գրանցելուց հրաժարվելու 22 ահազանգ՝ 26 տեղամասերում՝ 9 ՏԸՀ-ների սպասարկման տարածքներում (թիվ՝ 1, 2, 3, 4, 5, 6, 8 և 9 ՏԸՀ-ներ):

- **Դիտորդների լուսանկարահանման և/կամ տեսանկարահանման իրավունքի խախտում.**

Դիտորդների կողմից արձանագրվել է դիտորդների լուսանկարահանման և/կամ տեսանկարահանման իրավունքի խոչընդոտման 1 դեպք՝ թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում:

- **Ազատ տեղաշարժման սահմանափակում**

Թիվ 3/25 ընտրական տեղամասի քվեարկության սենյակը կահավորված է եղել այնպես, որ հնարավոր չի եղել համակողմանի դիտարկել ընտրական գործընթացը: Մասնավորապես, հանձնաժողովի անդամների սեղանները տեղադրված

են եղել անմիջականորեն պատի տակ, ինչի արդյունքում դիտորդը զրկվել է ընտրական գործընթացը համակողմանի դիտարկելու հնարավորությունից: Ավելին, տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը խոչընդոտել է դիտորդի ազատ տեղաշարժը քվեարկության սենյակում, արգելել է կանգնել քվեատուփի մոտ և դիտարկել իր աշխատանքները՝ նշելով, որ դիտորդը տեղաշարժվելու իրավունք չունի: Նման դեպք է արձանագրվել նաև թիվ 6/42 տեղամասում, որտեղ հանձնաժողովի նախագահին արգելել է ԻԵՄ-ի դիտորդին նստել հանձնաժողովի՝ քվեաթերթիկների բաշխման համար պատասխանատու անդամի կողքին և դիտարկել քվեաթերթիկների հատկացման գործընթացը՝ ստիպելով հեռանալ քվեարկության սենյակի այլ հատված: Հանձնաժողովի քարտուղարի միջամտությունից հետո դիտորդի իրավունքների խոչընդոտումը կասեցվել է:

- **Բռնություն թեկնածուի նկատմամբ.**

Երևանի քաղաքապետի՝ «Երկիր ծիրանի» կուսակցության կողմից առաջադրված քաղաքապետի թեկնածու Զարուհի Փոստանջյանը և նրա դուստրը քվեարկության օրը ՀՀԿ շտաբերից մեկում ոստիկանության ծառայողների կողմից ենթարկվել են բռնության, վերջիններս ընտրակաշառքի վերաբերյալ ահազանգ ստանալով՝ գնացել էին այդ ահազանգի հետքերով<sup>21</sup>:

Դեպի վայր եկած մի քանի տասնյակ ոստիկաններ, ուժի գործադրմամբ, հրելով, քարշ տալով՝ շտաբից դուրս են բերել թեկնածուին և նրա դստերը, ապա փորձել են բերման ենթարկել: Փոստանջյանի ինքնազգացողությունը վատացել է, երբ ոստիկանները փորձել են նրան նստեցնել ոստիկանության մեքենան:

<sup>21</sup> <https://www.azatutyun.am/a/28487204.html>;  
<https://www.youtube.com/watch?v=gUaGYdN-mfY>

• **Բռնություն, խոչընդոտներ լրագրողների նկատմամբ**

Մայիսի 14-ին, Երևանի ավագանու ընտրությունների օրն արձանագրվել է լրագրողների նկատմամբ բռնության երկու և տարատեսակ խոչընդոտների չորս դեպք<sup>22</sup>:

Մասնավորապես, մայրաքաղաքի Նար-Դոս փողոցում տեղակայված Հանրապետական կուսակցության շտաբում հարձակվել են «Ազատություն» ռադիոկայանի լրագրող Սիսակ Գաբրիելյանի վրա, քաշքշել ու հարվածել նրան: Իսկ Էրեբունի վարչական շրջանում գտնվող թիվ 64 դպրոցում (10/29 ընտրատեղամաս) բռնություն է կիրառվել «Armtimes.com» լրատվական կայքի թղթակից Տաթև Խաչատրյանի նկատմամբ: Վերջինիս աշխատանքը խոչընդոտվել է նաև Մալաթիա-Սեբաստիա համայնքի 7/46 ընտրատեղամասում: «Aravot.am»-ի լրագրող Հռիփսիմե Զեբեջյանի նկատմամբ ևս ճնշում է գործադրվել նույն տեղամասում: Մասնագիտական գործունեության խոչընդոտումների են բախվել նաև «1in.am» կայքի թղթակից Մարիամ Գրիգորյանը՝ Էրեբունի համայնքի 10/28 տեղամասում, «Hraparak.am»-ի լրագրող Սոնա Ադամյանը՝ Նորքի 2-րդ զանգվածում գտնվող Առետրի քոլեջում (2/50 ընտրատեղամաս):

Նմանատիպ փաստեր են արձանագրվել նաև քարոզարշավի ընթացքում. ճնշումների են ենթարկվել «Aravot.am»-ի թղթակից Նելլի Գրիգորյանը և «Հայկական ժամանակ» թերթի լրագրող Աննա Զախարյանը:

Հիշյալ դեպքերի կապակցությամբ համապատասխան հայտարարությամբ են հանդես եկել մի շարք հասարակական կազմակերպություններ<sup>23</sup>:

<sup>22</sup> <http://khosq.am/2017/05/14/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%B7%D5%A1%D6%80%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6-31/>  
<sup>23</sup> <http://khosq.am/2017/05/14/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%B7%D5%A1%D6%80%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6-31/>

• **ՏԸՀ աշխատանքների դիտարկումը.**

ՔԴՆ դիտորդական մեթոդաբանության նոր մարտավարության շրջանակներում դիտորդներ են գործուղվել բոլոր Տարածքային ընտրական հանձնաժողովներ՝ մայիսի 14-ից մինչև 19-ն ընկած ժամանակահատվածում դրանց աշխատանքները դիտարկելու նպատակով: Հիշյալ մարտավարությունը հնարավորություն է տվել բացահայտելու ՏԸՀ-ների բացարձակ կախվածությունը ԿԸՀ-ից և վերջինից անկախ, ինքնուրույն գործելու անկարողությունը, ինչպես նաև անկախ և ինքնուրույն օղակ լինելու պատրանքը: Դիտորդների օգնությամբ հնարավոր եղավ նաև բացահայտել, որ ՏԸՀ-ներն, ըստ էության, հանդես են գալիս որպես ԿԸՀ-ի կատարող ստորաբաժիններ, ինչը չի բխում ՀՀ ընտրական օրենսդրության պահանջներից:

Դիտորդներն արձանագրել են, որ ՏԸՀ-ների կողմից դիմում-բողոքների քննարկման համար նախատեսված համապատասխան ժամանակահատվածում վերջիններս այդ ուղղությամբ որևէ գործառույթ կամ այլ գործողություն փաստացի չեն իրականացրել:

Դիտորդների կողմից արձանագրվել են նաև փաստեր, որ ՏԸՀ-ների ստացած դիմում-բողոքներն ուղարկվել են ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովին՝ որոշումների վերաբերյալ դիրքորոշումներ ստանալու նպատակով:

Տարածքային ընտրական հանձնաժողովներում իրականացված դիտարկման արդյունքում արձանագրվել են տեղամասային ընտրական հանձնաժողովների կողմից ընտրական պարագաների սխալ փաթեթավորման դեպքեր, մասնավորապես, դեպքերի մեծամասնությունում ընտրողների ստորագրված ցուցակները դրված են եղել ընդհանուր պարկի մեջ, և տարածքային ընտրական հանձնաժողովները ընտրական պարկերը բացել ու հանել են ստորագրված ցուցակները՝ դրանք սկանավորելու նպատակով:

## 5. ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԴԻՏՈՐԴՆԵՐԸ.

### 5.1. Միջազգային դիտորդական առաքելություններ.

«Ճ ընտրական օրենսգրքով սահմանված կարգով հավատարմագրվել և Երևանի ավագանու ընտրությունների նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման ընթացքում դիտորդական առաքելություն է իրականացրել մեկ միջազգային կազմակերպություն՝ Եվրոպայի խորհրդի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսը (ԵԽՏՏԻԿ):

### 5.2. Տեղական դիտորդական առաքելություններ.

Երևանի ավագանու 2017թ. մայիսի 14-ի ընտրությունները դիտարկել են 17 կազմակերպությունների հավատարմագրված դիտորդներ, որոնց ընդհանուր թիվը հասել է 5138-ի:

Ինչպես և 2017թ. ԱԺ ընտրությունների դեպքում, այս անգամ ևս արձանագրվել են տարբեր դիտորդական կազմակերպությունների դիտորդների անկողմնակալության և չեզոքության՝ օրենքով առաջադրվող պահանջը խախտող վարքագծի դեպքեր: Ի սկզբանե իրավապաշտպան գործունեությամբ նախկինում աչքի չընկած և հանրությանն անհայտ դիտորդական կազմակերպությունների և դրանց դիտորդների նկատմամբ անվստահությունը հետագայում ևս հաստատվեց և հանրության համար ակնառու դարձավ նրանց իրական գործառույթը: Ինչպես դիտորդների դիտարկումների, այնպես էլ «Ճ նախագահի վերահսկողության ծառայության ղեկավար Հովհաննես Հովսեփյանի հարցազրույցի»<sup>24</sup> արդյունքում բացահայտվեցին այդ դիտորդական կազմակերպությունների ու դիտորդների իրական առաքելությունը, դրանց կառավարման և ենթակայության համակարգը՝ բուրգը, նմանօրինակ կեղծ դիտորդական համակարգի միջոցով ընտրությունների նկատմամբ իրականացված տոտալ վերահսկո-

ղությունը և այդ ամբողջ համակարգի անվերապահ ենթակայությունն ու հաշվետվողականությունը Հայաստանի հանրապետական կուսակցությանը: Ավելին, այս ընտրություններն աննախադեպ էին նաև նրանով, որ դրանց դիտարկման ժամանակ բացահայտվեց այլ, նախկինում չարձանագրված խախտում: ԻԵՄ-ի դիտորդների կողմից ընտրական տեղամասերում արձանագրված տարատեսակ խախտումների (այդ թվում՝ ուղղորդում, քվեարկության նկատմամբ վերահսկողություն, դիտորդների լիազորությունների խոչընդոտում/սահմանափակում, ճնշումներ) հեղինակ հանդիսացող այլ կազմակերպությունների դիտորդների անունները Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հավատարմագրված դիտորդների շարքում փնտրելու ընթացքում պարզվեց, որ կոնկրետ անուններով ներկայացող և այդ անուններով վկայականներ/տարբերանշաններ կրող, որպես դիտորդներ ներկայացող անձինք իրականում հավատարմագրված դիտորդներ չեն և, հետևաբար, ընտրական տեղամասերում գտնվելու իրավունք չունեն: Փաստորեն, հաստատվեց այն կասկածը, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հավատարմագրված կազմակերպությունների մեծ մասը ոչ միայն ընտրական տեղամասերը մատակարարում է կեղծ դիտորդներով, որոնց հիմնական առաքելությունը ընտրողներին ուղղորդելն ու նրանց կողմից կատարվող քվեարկությունն իրենց վերահսկողության տակ պահելն է, այլև այդ կեղծ դիտորդներին ապահովում է կեղծ վկայականներով<sup>25,26</sup>: Մի շարք դեպքերում այդ «դիտորդներն» ունեցել են մի քանի վկայական՝ տրված տարբեր կազմակերպությունների կողմից և/կամ վստահված անձի վկայական՝ տրված «Ճ կողմից, և որպես դիտորդ տեղամասային կենտրոնից ԻԵՄ-ի դիտորդների պնդման արդյունքում հեռացվելուց հետո, վերդառնում էին արդեն մեկ այլ կազմակերպության կողմից տրված դիտորդի կամ «Ճ կողմից տրված վստահված անձի վկայականով:

17 տեղական դիտորդական առաքելություն իրականացրած կազմակերպություններից և 5138 դիտորդներից միայն «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության և «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի շրջանակներում հանդես եկող կազմակերպություններն ու

<sup>24</sup> <http://armlur.am/681377/>

<sup>25</sup> <https://www.youtube.com/watch?v=q2bgeXcq3qo>

<sup>26</sup> <https://factor.am/36566.html>



դիտորդներն են դիտարկել առավել մեծ թվով ընտրախախտումներ և նպաստել դրանց հանրայնացմանը, միևնույն ժամանակ ձեռնամուխ եղել ընտրական իրավունքի (ինչպես սուբյեկտիվ, այնպես էլ՝ օբյեկտիվ) պաշտպանությանը, այդ թվում՝ իրավական գործընթացներ նախաձեռնելով:

## 6. ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ.

### Բողոքարկման գործընթացի ամփոփ նկարագրություն.

Ի տարբերություն մյուս դիտորդական առաքելությունների, ՔԳՆ առանձնահատկություններից մեկը ընտրությունների շրջանակներում դիտարկված խախտումների վերաբերյալ՝ ինչպես դիտորդների սուբյեկտիվ իրավունքների, այնպես էլ՝ ընդհանուր (օբյեկտիվ) ընտրական իրավունքի պաշտպանության շրջանակներում ընտրական իրավունքի խախտման դեպքերով բողոքարկման գործընթացի և իրավունքի զարգացման նպատակով ռազմավարական դատավարությունների նախաձեռնումն է:

Դիտորդական առաքելության իրավաբանական թիմը դիտորդների դիտարկած և հաղորդած ընտրախախտումների առնչությամբ նախաձեռնել է բողոքարկման գործընթաց: 2017 թվականի մայիսի 14-ին և 15-ին, ինչպես դիտորդների սուբյեկտիվ իրավունքների խախտումների, այնպես էլ՝ ընդհանուր (օբյեկտիվ) ընտրական իրավունքի խախտումների վերաբերյալ «Իրավունքի Եվրոպա միավորում» ԻՀԿ-ի և վերջինիս դիտորդների կողմից 19 դիմում-բողոք է ներկայացվել Երևանում տեղակայված 10 տարածքային ընտրական հանձնաժողովներ (ՏՀՀ), որոնց մի մասը վերաբերել է ընտրական տեղամասերում կատարված խախտումներին, իսկ մյուս մասը՝ տարածքային ընտրական հանձնաժողովներում կատարված խախտումներին: Նշված բողոքները ներառել են ինչպես օբյեկտիվ, այնպես էլ՝ սուբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումներ, որոնք խմբավորված ընդգրկվել են բողոքներում:

**2017 թվականի մայիսի 14-ի Երևանի ավագանու ընտրությունների ընթացքում արձանագրված խախտումների վերաբերյալ**

**ներկայացված բոլոր դիմում-բողոքների հիման վրա վարչական վարույթի հարուցումը մերժվել է կամ մասնակի, կամ՝ ամբողջությամբ (19 որոշում), ինչը պատճառաբանվել է** դիմումատու դիտորդների և կազմակերպությունների՝ դիմումներում վկայակոչվող իրավունքների պաշտպանությամբ դիմելու իրավունք ունեցող իրավասու սուբյեկտներ չհանդիսանալու (իրավասուբյեկտության բացակայության հիմքով) հղում կատարելով ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասին և 49-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ պարբերությանը **և ներկայացված փաստերի կապակցությամբ արդյունավետ քննություն չի իրականացվել:** Այն փոքրաթիվ դեպքերում էլ, երբ տարածքային ընտրական հանձնաժողովների կողմից իրականացվել է ներկայացված դիմում-բողոքների քննություն (ընդ որում, այս դեպքերում քննությունն իրականացվել է միայն դիտորդի սուբյեկտիվ իրավունքների խախտման մասով), այն չի եղել բազմակողմանի և օբյեկտիվ, կրել է բացառապես ձևական բնույթ:

### 6.1. Դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների և դիտորդների իրավասուբյեկտության մասով:

Դիտորդին և դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությանը՝ տեղամասային ընտրական հանձնաժողովների գործողությունների/անգործության բողոքարկման համար ոչ իրավասու սուբյեկտ ճանաչելու հիմքով (օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումների մասով) վարույթների հարուցման մերժումը, իրավունքին և օրենքին տրված սահմանափակ և կամայական մեկնաբանությունը չի բխում ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածի բովանդակությունից, քանի որ Տեղական ինքնակառավարման մարմինները չեն տրվել իրավունքով օժտված յուրաքանչյուր անձ պետք է ունենա նաև այս իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոց: Հիշյալ մեկնաբանությունը հակասում է նաև ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասին: Մասնավորապես, ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք կարող է բո-

դրքարկել ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը (անգործությունը), եթե գտնում է, որ խախտվել կամ կարող է խախտվել իր՝ ընտրական օրենսգրքով սահմանված սուբյեկտիվ ընտրական իրավունքը: Այս իրավունքը ներառում է յուրաքանչյուր քաղաքացու՝ օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումները վիճարկելու, ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները (անգործությունը) բողոքարկելու իրավունքը, քանի որ ընտրությունների ընթացքում արձանագրված ընտրախախտումներն իրենց համակցության մեջ և/կամ բնույթով կարող են ուղղակի ազդեցություն ունենալ յուրաքանչյուր ընտրողի քվեի վրա (հասցեականություն, արդյունավետություն): Հետևաբար, ընտրական իրավահարաբերությունների սուբյեկտ հանդիսացող յուրաքանչյուր անձի, այդ թվում՝ դիտորդի և դիտորդական կազմակերպության կողմից ներկայացված դիմում-բողոքները օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումների հիմքով ենթակա են քննության: Հակառակ մեկնաբանությունը կհանգեցնի ընտրական իրավունքի էության խախտմանը:

## 6.2. Դիմող կազմակերպությունների մասով վարույթի հարուցման մերժման վերաբերյալ հասարակական կազմակերպությունների իրավասուբյեկտության մասով.

ՏԸՀ որոշումների համաձայն՝ դիմումատու հասարակական կազմակերպությունները դիմում-բողոք ներկայացնելու իրավասու սուբյեկտ չեն հանդիսանում, քանի որ հասարակական կազմակերպությունների՝ ՀՀ ընտրական օրենսգրքով նախատեսված իրավունքներն ամրագրված են ՀՀ ընտրական օրենսգրքի 30-րդ և 31-րդ հոդվածներով և վերաբերում են դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով հավատարմագրվելուն: **Որոշումներով արձանագրվել է նաև, որ ՀՀ ընտրական օրենսգրքով հասարակական կազմակերպությունների համար որևէ այլ իրավունք նախատեսված չէ:** Ելնելով վերոգրյալից՝ ՏԸՀ-ները եզրահանգել են, որ հասարակական կազմակերպությունները կարող

են ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված իրենց իրավունքների պաշտպանության նպատակով բողոքարկել բացառապես իրենց հավատարմագրմանն առնչվող ակտերը:

Վերոգրյալ պատճառաբանությամբ վարչական վարույթների հարուցման մերժումը ուղղակիորեն հակասել է ՀՀ ընտրական օրենսգրքի դրույթներին: ՀՀ ընտրական օրենսգրքի 30-րդ հոդվածի ուժով ՀՀ հասարակական կազմակերպությունների վերապահված է ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելության իրավունք<sup>27</sup>, որը համապատասխան կազմակերպությունն իրականացնում է իր կողմից հավատարմագրված դիտորդների միջոցով: Դիտորդի բողոքներ ներկայացնելու իրավասուբյեկտության վերաբերյալ ներկայացված հիմնավորումները հավասարապես կիրառելի են դիտորդական կազմակերպությունների նկատմամբ, քանի որ վերջիններս հանդիսանում են ընտրական իրավահարաբերությունների լիարժեք սուբյեկտ: Նրանց դիտորդական առաքելությունը հանդիսանում է հանրային գործառույթ, որի նպատակն է ապահովել ընտրությունների թափանցիկությունը և նպաստել ընտրական գործընթացների պատշաճ իրականացմանը: Վերոնշյալ հանրային իրավական գործառույթի արդյունավետ իրականացումը, ի թիվս այլնի, պայմանավորված է դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների կողմից ընտրական իրավունքի խախտումների վերաբերյալ դիմում-բողոքներ ներկայացնելու հնարավորությամբ (իրավասուբյեկտությամբ) (թե դիտորդի սուբյեկտիվ իրավունքների խախտման և թե օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումների վերաբերյալ), հատկապես, երբ դիտորդների իրավունքների խախտման պարագայում անմիջականորեն խախտվում է նաև կազմակերպության դիտորդական առաքելության իրավունքը, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության

<sup>27</sup> Այն կազմակերպությունները, որոնց կանոնադրական նպատակներն ընտրությունները նշանակելու օրվան նախորդող նվազագույնը մեկ տարի ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր, և որոնք չեն աջակցում թեկնածուներին կամ ընտրություններին մասնակցող կուսակցություններին:

42-րդ և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով նախատեսված՝ տեղեկություններ ստանալու իրավունքը, քանի որ կազմակերպության դիտորդական առաքելության իրավունքի իրացումն ուղղակիորեն փոխկապակցված է դիտորդի գործունեության հետ:

Իրենց նպատակների շրջանակներում<sup>28</sup> կոլեկտիվ կամ համայնքային իրավունքների և օրինական շահերի պաշտպանությամբ հասարակական կազմակերպությունների հանդես գալու իրավասությամբ (իրավասություններով) («actio popularis» հանրային գանգատի ինստիտուտ) օժտված լինելու մասին են խոսում նաև ՀՀ Սահմանադրական դատարանն՝ իր 07.09.2010թ. ՍԴՈ-906 որոշմամբ, ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 30.10.2009թ. թիվ ՎԴ/3275/05/08 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2004 թվականի դեկտեմբերի 15-ի՝ «Վարչական ակտերի նկատմամբ դատական վերահսկողության մասին» (2004) 20 հանձնարարականը, և այդպիսի դիրքորոշումները կիրառելի են նաև ընտրական իրավունքի ոլորտում խախտումների վերաբերյալ դիմում-բողոքներ ներկայացնելու իրավունքի իրավասությունների պարագայում:

### 6.3 Դիտորդների սուբյեկտիվ իրավունքների խախտումների մասով.

Դիտորդների սուբյեկտիվ իրավունքների խախտումների գերակշիռ մեծամասնությունը դրսևորվել է խախտման վերաբերյալ դիտորդի գնահատականը տեղամասի գրանցամատյանում չարձանագրելու միջոցով: Նշված դեպքերի առնչությամբ ՏԸՀ-ներն արդյունավետ քննություն չեն իրականացրել:

<sup>28</sup> Դիտորդական կազմակերպությունների կանոնադրական նպատակներից են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանությունը, կոլեկտիվ կամ համայնքային կոնկրետ շահերի պաշտպանությունը, ինչպես նաև ընտրությունների և հանրաքվեի օրինականության նկատմամբ վերահսկողության իրականացումը, այլոց իրավունքների, որոշակի խմբի կոլեկտիվ իրավունքի պաշտպանությունը:

- **Դիտորդների դիտարկումներն ու գնահատականները տեղամասերի գրանցամատյաններում չարձանագրելու մասով.**

Ի տարբերություն 2017թ. ապրիլի 2-ի ԱԺ ընտրությունների հետընտրական բողոքարկման գործընթացի, Երևանի ավագանու ընտրությունների շրջանակներում կայացված որոշումներով ՏԸՀ-ները գտել են, որ դիմումատու դիտորդներն իսկապես հանդիսանում են դիմում-բողոք ներկայացնելու համար իրավասու սուբյեկտներ, քանի որ դիմումում մատնանշել են իրենց՝ որպես դիտորդի պատկանող իրավունքի ենթադրյալ խախտումներ: Այնուամենայնիվ, ընտրական վարչարարություն իրականացնող ՏԸՀ-ների մոտեցումները և դիրքորոշումները՝ դիտորդի կողմից խախտման վերաբերյալ իր գնահատականը տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում գրանցելու վերաբերյալ պահանջ ներկայացնելու, դրա վերաբերյալ ապացույցների առկայության և այդ ապացույցների վարչական վարույթի շրջանակներում ձեռքբերման և գնահատման առումով շարունակում են խնդրահարույց մնալ: Մասնավորապես, ՏԸՀ-ները շարունակում են հիմնականում հիմնվել համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների կամ քարտուղարների գրավոր, կամ բանավոր բացատրությունների վրա (միայն երկու դեպքում են տարածքային ընտրական հանձնաժողովները դիմել դիտորդներին՝ բացատրություն տալու համար): Եղել են դեպքեր, երբ առկա են եղել դիտորդի կողմից արձանագրված խախտումը գրանցամատյանում գրանցելու պահանջ ներկայացնելու ապացույցներ, սակայն, ՏԸՀ-ները կրկին եզրակացրել են, որ դիտորդների սուբյեկտիվ իրավունքների խախտում չի եղել՝ նշելով, որ դիտորդի արձանագրած խախտումը չի վերաբերել քվեարկության կարգին, կամ պահանջը ներկայացվել է քվեարկության արդյունքների ամփոփման նիստի ժամանակ, հետևաբար և խախտման վերաբերյալ դիտորդի գնահատականը գրանցամատյանում չգրանցելն իրավաչափ է:

#### 6.4. ՏԸՀ նիստերի վերաբերյալ ծանուցումներն ու դիմում-բողոքների քննության ժամկետները.

Չնայած այն բանին, որ Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ արձանագրված խախտումների վերաբերյալ գրեթե բոլոր դիմում-բողոքները ներկայացվել են մինչև 2017թ. մայիսի 16-ը, դրանք քննվել են տարածային ընտրական հանձնաժողովների կողմից միայն մայիսի 19-ին: Բոլոր 10 ՏԸՀ-ները ներկայացված բողոքների քննության համար նիստ են նշանակել 2017թ. մայիսի 19-ին, գրեթե բոլոր դեպքերում նույն ժամին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մայիսի 19-ը եղել է ուրբաթ, իսկ ընտրությունների արդյունքները պետք է ամփոփվեին կիրակի, մայիսի 21-ին, ինչպես նաև այն, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը դիմում-բողոքներ ընդունում է միայն աշխատանքային օրերին, ՏԸՀ-ները, մայիսի 19-ին որոշում կայացնելով՝ զրկել են դիմումատուներին մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը ՏԸՀ-ների որոշումները վերադասության կարգով ԿԸՀ բողոքարկելու և ԿԸՀ-ի կողմից՝ արձանագրված խախտումների՝ ընտրությունների արդյունքների վրա ազդեցությունը գնահատելու հնարավորությունից:

#### 6.5. Դիմում-բողոքումներով ՏԸՀ նիստերն ու որոշումները.

- **Որոշ դեպքերում ՏԸՀ-ների՝ վարչական վարույթի հարուցումը մերժելու կամ բողոքը մերժելու մասին որոշումների<sup>29</sup> հիմքում դրվել են բացառապես համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների պարզաբանումները:**

Որոշումներով արձանագրվել է, որ ՏԸՀ-ները բանավոր կամ գրավոր հարցմամբ<sup>30</sup> համապատասխան տեղամասային

<sup>29</sup> Թիվ 5 տարածքային ընտրական հանձնաժողովի թիվ 7-Ա որոշում, թիվ 4 տարածքային ընտրական թիվ 18-Ա որոշում և թիվ 8 տարածքային ընտրական հանձնաժողովի թիվ 15-Ա որոշում:

<sup>30</sup> Մեկ դեպքում հարցումը հանձնաժողովի նախագահից բացի ուղղվել է նաև նույն հանձնաժողովի քարտուղարին: Եզակի դեպքերում որոշումներով հղում է կատարվել

ընտրական հանձնաժողովների նախագահներից պարզել են, որ դիտորդների կողմից պահանջի դեպքում յուրաքանչյուր անգամ կատարվել են գրառումներ, իսկ գրանցամատյաններում գրառումների բացակայությունը պատճառաբանվել է դիտորդների՝ նման պահանջ չներկայացնելու հիմքով:

Դրանով իսկ խախտվել են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով ամրագրված վարչական վարույթի բազմակողմանիության, լրիվության և օբյեկտիվության պահանջները: Այս փաստը վկայում է նաև այն մասին, որ իրականում հանձնաժողովների կողմից իրականացվել է վարչական վարույթ՝ առանց մի շարք դեպքերում վարույթի մասնակիցներին ծանուցելու, ինչի արդյունքում խախտվել են դիմում ներկայացրած անձանց լսված լինելու և պատշաճ վարչարարության իրավունքները: Այսինքն, ՏԸՀ-ները որոշել են ներկայացված բողոքներով վարչական վարույթ չհարուցել, այնինչ վերոհիշյալ գործողություններն ինքնին վարչական վարույթի բաղադրիչ են:

- **ՏԸՀ-ները որոշել են, որ դիմում-բողոքներում վկայակոչված խախտումները չեն հանդիսանում քվեարկության կարգի խախտում, կամ առհասարակ ընտրական օրենսգրքի խախտում.**

Որոշ դեպքերում ՏԸՀ-ների որոշումներով գնահատվել է վկայակոչված խախտման բնույթը և դիմում-բողոքները մերժվել են՝ ներկայացված խախտումները որպես քվեարկության կարգի խախտում, կամ առհասարակ ընտրական օրենսգրքի խախտում չդիտարկելու պատճառաբանությամբ<sup>31</sup> արձանագրելով, որ այդպիսի խախտումների վերաբերյալ տեղամասի գրանցամատյանում գրառում չկատարելու չի հանգեցրել դիտորդի իրավունքի խախտման:

Թեև ՏԸՀ-ները որոշումներ էին կայացնում վարչական վարույթների հարուցումը մերժելու մասին դիտորդների և դի-

տեղամասային հանձնաժողովների նախագահների գրավոր բացատրություններին: <sup>31</sup> Թիվ 2 տարածքային ընտրական հանձնաժողովի թիվ 24-Ա որոշում և Թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի թիվ 18-Ա որոշում

տորդական կազմակերպությունների իրավասություններին պատճառաբանությամբ, միևնույն ժամանակ, նրանք երբեմն անդրադառնում էին դիմում-բողոքներով ներկայացված պահանջներին, մասնավորապես, ՏՀՀ-ների որոշումներով արձանագրում էին նաև, որ դիմումներով վկայակոչված փաստերը որևէ կերպ չեն կարող ազդեցություն ունենալ քվեարկության արդյունքների վրա՝ որևէ կերպ չպատճառաբանելով, թե ինչպես են հանգել նման հետևության<sup>32</sup>:

• **ՏՀՀ-ների ձևական և կամայական մոտեցումները դիմում-բողոքների ընդունելության և քննության կապակցությամբ.**

ՏՀՀ-ները կիրառել են բոլոր հնարավոր և անհնար պատրվակներն ու պատճառաբանությունները՝ դիմում-բողոքները մերժելու և դրանցով վարույթների հարուցումը մերժելու համար: Այսպես օրինակ՝ մայիսի 19-ին ՔԳԼ իրավաբաններից մեկը մասնակցել է թիվ 10 ՏՀՀ -ի նիստին: ՏՀՀ-ն արդեն իսկ ունեցել է վարչական վարույթը մերժելու որոշման նախագծեր, որոնք ընթերցվել և ընդունվել են նիստի ընթացքում՝ առանց ՏՀՀ որևէ անդամի առարկության: Իրավաբանը երեք միջնորդություն է ներկայացրել որոշման նախագծերի ներկայացման ընթացքում, որոնք նախ՝ թողնվել են անարձագանք, ապա՝ իրավաբանի բազմակի պնդումներից հետո միայն դրվել քվեարկության և առանց հանձնաժողովի անդամների կողմից քննարկվելու մերժվել:

Մեկ դեպքում ՏՀՀ-ն որոշում է կայացրել բողոքը մերժելու մասին, քանի որ այն ներկայացնող դիտորդը գրանցված չի եղել տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամտյանում<sup>33</sup>: Այնինչ, հիշյալ հանգամանքը միայն վկայում էր տեղամասային հանձնաժողովի նախագահի կամ քարտուղարի պարտականությունների ոչ պատշաճ կատարման

<sup>32</sup> Թիվ 8 տարածքային ընտրական հանձնաժողովի թիվ 15-Ա որոշում; թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի թիվ 18-Ա որոշում; թիվ 6 տարածքային ընտրական հանձնաժողովի թիվ 13-Ա որոշում:

<sup>33</sup> Թիվ 2 տարածքային հանձնաժողովի թիվ 25-Ա որոշում:

մասին և ինքնին հիմք էր վերջիններիս պատասխանատվության հարցը քննարկելու համար:

• **Թիվ 5 դեպքերում ՏՀՀ-ների կողմից կայացվել են որոշումներ, որոնցով վերջիններս միջնորդել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովին ուժը կորցրած ճանաչել թիվ 7 տեղամասային հանձնաժողովների նախագահների՝ ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականները<sup>34</sup>:**

• **Մեկ դեպքում դիմում-բողոքը տարածքային ընտրական հանձնաժողովների կողմից ուղարկվել են իրավապահ մարմիններին, իսկ համապատասխան խախտումները (բռնություն դիտորդի նկատմամբ) գնահատվել են որպես քվեարկության արդյունքների վրա ազդեցություն չունեցող<sup>35</sup>:**

• **ՏՀՀ-ների կողմից դիմում-բողոքներով ներկայացված խախտումների վերաբերյալ սեփական նախաձեռնությամբ վարույթ չի հարուցվել:**

• **ՏՀՀ-ների կողմից կայացված որոշումներով որևէ անդրադարձ չի կատարվել համապատասխան հանձնաժողովներին ներկայացված միջնորդություններին:**

Բոլոր դեպքերում, երբ դիտորդական կազմակերպությունների ներկայացուցիչները հնարավորություն են ունեցել մասնակցելու ՏՀՀ նիստերին, նրանց կողմից ներկայացվել են միջնորդություններ՝ 1) ՏՀՀ սպասարկման տարածքում տեղակայված համապատասխան տեղամասային ընտրական

<sup>34</sup> Թիվ 2 տարածքային ընտրական հանձնաժողովի թիվ 24-Ա որոշում, թիվ 3 տարածքային ընտրական հանձնաժողովի թիվ 11-Ա որոշում, թիվ 4 տարածքային ընտրական հանձնաժողովի թիվ 18-Ա որոշում, թիվ 6 տարածքային ընտրական հանձնաժողովի թիվ 13-Ա որոշում, թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի թիվ 18-Ա որոշում:

<sup>35</sup> Թիվ 9 տարածքային ընտրական հանձնաժողովի թիվ 12-Ա որոշում, թիվ 12 տարածքային ընտրական հանձնաժողովի թիվ 9-Ա որոշում, թիվ 8 տարածքային ընտրական հանձնաժողովի թիվ 10-Ա որոշում, թիվ 2 տարածքային ընտրական հանձնաժողովի թիվ 18-Ա որոշում, թիվ 5 տարածքային ընտրական հանձնաժողովի 8-Ա որոշում

հանձնաժողովների գրանցամատյանները զննելու, 2) ՏԸՀ սպասարկման տարածքում տեղակայված համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովներում տեսաձայնագրությունների պատճենները ստանալու և/կամ զննելու, 3) ապացույցները վարչական վարույթի նյութերին կցելու և զննելու, 4) համապատասխան տեղամասային հանձնաժողովների անդամներին, ինչպես նաև գրանցամատյաններում քվեարկության օրը քվեարկության սենյակում և տեղամասային հանձնաժողովների նիստերին ներկա գտնված և գրանցամատյանի համապատասխան էջում գրանցված անձանց որպես վկա հրավիրելու վերաբերյալ: ՏԸՀ որոշումներում որևէ անդրադարձ չի կատարվել ներկայացված միջնորդություններին, հանձնաժողովները հրաժարվել են քննել այդ միջնորդությունները, ինչի հետևանքով խախտվել են վարչական վարույթի բազմակողմանիության, լրիվության և օբյեկտիվության պահանջները, ինչպես նաև դիմումատուների իրավունքները<sup>36</sup>:

- **ՏԸՀ-ների կողմից որոշումները կայացվել են այնպիսի ժամկետներում, որոնք բացառել են այդ որոշումների դեմ ներկայացված բողոքները ԿԸՀ կողմից մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը քննելու և արդյունքների ամփոփման շրջանակներում դրանք գնահատելու հնարավորությունը:**

Դիմող կազմակերպությունների և դիտորդների կողմից ներկայացված բոլոր դիմում-բողոքների վերաբերյալ որոշումները ՏԸՀ-ների կողմից կայացվել են (թվագրվել են) **19.05.2017 թ.**, ուրբաթ օրը, ինչը զրկել է դիմումատուներին այդ որոշումները մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը ԿԸՀ-ում բողոքարկելու և դրանցում տեղ գտած խախտումների ազդեցությունը ընտրությունների արդյունքների վրա՝ դրանք ամփոփելու շրջանակներում գնահատելու հնարավորությունից:

<sup>36</sup> «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 44-րդ, 45-րդ, 75-րդ հոդվածներ, ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածով երաշխավորված պատշաճ վարչարարության իրավունք:

- **ՏԸՀ որոշումները բողոքարկելու իրավունքի իրացման խոչընդոտների մասով:**

Դիմողների համար ՏԸՀ որոշումների բողոքարկման իրավունքի իրացման տեսանկյունից լուրջ խոչընդոտ է հանդիսացել ինչպես ՏԸՀ-ների կողմից նիստերի նշանակման մասին պատշաճ ծանուցումների բացակայությունը, այնպես էլ՝ որոշումների ընդունման մասին ծանուցման բացակայությունը՝ համապատասխան որոշումները ձեռք բերելու, դրանց մատչելիության և հրապարակման պահից 3-օրյա ժամկետում բողոքարկելու<sup>37</sup> առումով:

### 6.6. ԿԸՀ մասնակցությունը և միջամտությունը ԸԸՀ և ՏԸՀ գործունեությանը. ՏԸՀ-ների անկախության բացակայությունը.

ՏԸՀ որոշումների հիմնավորումները գրեթե տառի ճշտությամբ նույնական են, ինչն անհնար է, եթե այդ որոշումները մեկ կենտրոնից չեն կայացվում: Ավելին, ՏԸՀ որոշումների և ԿԸՀ որոշումների հիմնավորումները նույնպես գրեթե տառի ճշտությամբ նույնական են, բացառությամբ սուբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումներ ներառող որոշ դեպքերի: Նշվածը վկայում է ԿԸՀ-ի համակարգմամբ դիտորդների և նրանց ներկայացուցիչների՝ դիմում-բողոքների քննությանը մասնակցելու արհեստական խոչընդոտների ստեղծման, խախտման փաստերի իրական քննություն և դրանց ազդեցության գնահատում իրականացնելու նպատակի, ինչպես նաև տարածքային ընտրական հանձնաժողովների անկախության բացակայության մասին:

ՏԸՀ-ներում դիմում-բողոքների քննությունը կրել է գուտ ձևական բնույթ, հանձնաժողովներն արդեն իսկ ունեցել են նախապատրաստված որոշումների նախագծեր, որոնք պարզապես ընթերցվել են նիստերի ընթացքում և առանց

<sup>37</sup> ՀՀ ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ տարածքային ընտրական հանձնաժողովի ընդունած վարչական ակտն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

որևէ փոփոխության ընդունվել: Որևէ գործողություն չի ձեռնարկվել դիմում-բողոքներով մատնանշված փաստական հանգամանքներն ըստ էության քննելու համար: Դրա մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ ներկայացված միջնորդությունները՝ վկաներ հրավիրելու, գրանցամատյանները զննելու, տեղամասերի տեսագրությունները ուսումնասիրելու, ինչպես նաև ներկայացված ապացույցները զննելու վերաբերյալ<sup>38</sup>, մերժվել են հանձնաժողովների կողմից: Միջնորդությունների վերաբերյալ անդրադարձ չի կատարվել նաև կայացված որոշումներում, ենթադրաբար այն պատճառով, որ որոշումների նախագծերը նախապես պատրաստ են եղել և փոփոխության այլևս չեն ենթարկվել: Թեև որոշ նիստերին հնարավոր է եղել ապահովել նաև դիտորդների մասնակցությունը, որոնք բացատրություններ են ներկայացրել իրենց կողմից արձանագրված խախտումների վերաբերյալ, այնուամենայնիվ, դրանք որևէ կերպ չեն արտացոլվել հանձնաժողովների որոշումներում:

#### 6.7. ԿԸԿ ներկայացված բողոքների և դրանց քննության մասով.

**Մինչև 21.05.2017թ. ՀՀ ԿԸԿ կողմից Երևանի ավագանու ընտրությունների արդյունքների ամփոփման նիստը ԻԵՄ-ն ձեռք է բերել ՏԸԿ որոշումները և 15 բողոք ներկայացնել բոլոր 10 ՏԸԿ-ների կողմից կայացված որոշումների դեմ:**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՏԸԿ-ները որոշումներն ընդունել են մայիսի 19-ին, իսկ այդ օրվան հաջորդում էին ոչ աշխատանքային օրեր, ինչպես նաև այն հանգամանքը, որ ԱԺ ընտրությունների ժամանակ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հրաժարվել էր ընդունել ներկայացված դիմում-բողոքները՝ դրանք ոչ աշխատանքային օր ներկայացնելու պատճառաբանությամբ (չնայած նույն օրը հանձնաժողովի կողմից ամփոփվելու էին ընտրությունները):

<sup>38</sup> Մի դեպքում միայն իրականացվել է ներկայացված ապացույցի ոչ լիարժեք զննություն:

րի արդյունքները), դիմում-բողոքները ներկայացվել են ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով առաջին իսկ աշխատանքային օրը՝ 22.05.2017թ.<sup>39</sup>: ԿԸԿ ներկայացված դիմում-բողոքները քննվել են երեք նիստերի ընթացքում՝ մայիսի 18-ին, 20-ին և հունիսի 6-ին:

ՀՀ ԿԸԿ նիստերի ընթացքում դիմողների ներկայացուցիչների կողմից ներկայացվել են հետևյալ միջնորդությունները.

1. տարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքում տեղակայված տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյանները զննելու,
2. համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովներում կատարված տեսաձայնագրությունների պատճեններն ստանալու և/կամ զննելու,
3. տեղամասային հանձնաժողովների անդամներին, գրանցամատյաններում քվեարկության օրը քվեարկության սենյակում և տեղամասային հանձնաժողովների նիստերին ներկա գտնված և գրանցամատյանի համապատասխան էջում գրանցված անձանց՝ որպես վկա հրավիրելու,
4. ներկայացված էլեկտրոնային կրիչի վրա տարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքում ընդգրկված տեղամասերում դիտորդների կողմից արձանագրված խախտումների վերաբերյալ ապացույցները գործին կցելու և հանձնաժողովի նիստի ընթացքում զննելու վերաբերյալ:

Բոլոր այս միջնորդությունները մերժվել են ի սկզբանե՝ մինչև տարածքային ընտրական հանձնաժողովների որոշումների դեմ ներկայացված բոլոր դիմում-բողոքների քննությունը և, ըստ էության, առանց որևէ պատճառաբանության:

Բողոքների քննությունը ԿԸԿ-ում կրել է ձևական բնույթ, ավելի

<sup>39</sup> Տարածքային ընտրական հանձնաժողովների գործողությունների դեմ երկու բողոք ներկայացվել էին մայիսի 16-ին:

ստույգ, նիստերի ընացքում հանձնաժողովի կողմից ընթերցվել են որոշումների նախագծերը և միաձայն ընդունվել, ամբողջությամբ անտեսվել են նիստերի ընթացքում դիտորդների ներկայացուցիչների կողմից արված հայտարարությունները և տրված պարզաբանությունները: Անխտիր բոլոր դիմում-բողոքները մերժվել են նույնաբովանդակ պատճառաբանություններով:

ԿԸՀ կողմից մայիսի 18-ին, 20-ին և հունիսի 6-ին կայացված որոշումները հանձնաժողովի պաշտոնական կայքում հրապարակվել են (հասանելի են դարձել) ընդունումից հետո երկրորդ օրն՝ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված է որոշումների բողոքարկման եռօրյա ժամկետ, որը հաշվարկվում է ԿԸՀ-ի նիստում որոշումների հրապարակման պահից: Այնուամենայնիվ, դիտորդական կազմակերպությունի և դիտորդների ներկայացուցիչների կողմից ԿԸՀ որոշումները բողոքարկվել են ՀՀ վարչական դատարան: Ներկայացվել է ընդհանուր առմամբ 15 հայց:

#### **6.8. Վարչական դատարան ներկայացված հայցերի մասով.**

ՔԴՆ կողմից ներկայացվել է թվով 13 հայցադիմում:

#### **6.9. Ընտրությունների և ընտրությունների արդյունքների կապակցությամբ ընտրություններին մասնակցող կազմակերպությունների հարուցած ընտրական վեճերի մասով.**

Երևանի ավագանու 2017 թվականի մայիսի 14-ի ընտրությունների շրջանակներում ընտրական վեճերի հարուցմամբ հանդես են եկել «ԵԼՔ» դաշինքը<sup>40</sup> (հիշյալ ընտրական վեճը նկարագրված է սույն զեկույցի 4.3.1. բաժնում) և «Երկիր ծիրանի» կուսակցությունը:

Նշվածի առնչությամբ ՀՔԾ-ն հարուցել է քրեական գործ, որը, սակայն, կարճ ժամանակ անց, կարճել է<sup>42</sup>:

Ընտրությունների արդյունքները վիճարկվել են «Երկիր ծիրանի» կուսակցության կողմից վարչական դատարանում<sup>43</sup>, որն էլ 31.05.2017թ. մերժել է կուսակցության հայցադիմումը:

<sup>40</sup> <https://www.azatutyun.am/a/28483127.html>

<sup>41</sup> <https://www.azatutyun.am/a/28486372.html>

<sup>42</sup> <http://shamshyan.com/hy/article/2017/08/17/1074939/>

<sup>43</sup> <https://www.azatutyun.am/a/28506512.html>

## **7. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.**

Հաշվի առնելով, որ 2017թ. ապրիլի 2-ի ԱԺ ընտրությունների դիտարկման կապակցությամբ հրապարակված զեկույցի «Եզրահանգումներ»՝ 5-րդ և «Առաջարկություններ» 6-րդ բաժիններում մանրամասն վերլուծվել և նկարագրվել են առկա խնդիրներն ու դրանց կապակցությամբ անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունները, սույն զեկույցով ներկայացվում են միայն այն փոփոխությունները, որոնք լրացնում են արդեն իսկ հրապարակվածը:

### **7.1. Ընտրական հանձնաժողովների և վարչարարության մասով.**

Սույն զեկույցի «Բողոքարկում» բաժնում շարադրված հանգամանքները հաշվի առնելով՝ ակնհայտորեն անհրաժեշտություն է առաջանում իրականացնել ընտրական օրենսգրքի այնպիսի փոփոխություններ, որոնք կհամապատասխանեն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի սկզբունքներին և կլինեն պիտանի ընտրական գործընթացներում, ժամկետային համապատասխան սահմանափակումների պայմաններում այնպիսի կիրառության համար, որը կբավարարի իրավունքի գերակայության սկզբունքներին: Անհրաժեշտ է նաև վերացնել այն արհեստական և ֆորմալ կարգավորումը, որն, ըստ էության, հնարավորություն է տալիս հանձնաժողովներին քննել բողոքների բովանդակային հարցեր՝ միևնույն ժամանակ մերժելով բողոքների հիման վրա վարչական վարույթների հարուցումը և ազատվել խնդրո առարկա իրավահարաբերության մասնակիցների ընթացակարգային իրավունքների ապահովման պարտականությունից:

Միևնույն ժամանակ, ընտրական օրենսգրքում անհրաժեշտ են այնպիսի փոփոխություններ, որոնք կերաշխավորեն դիտորդների՝ գրանցամատյաններում գրանցումներ կատարելու իրավունքի իրացումն այն ծավալներով, որը կընդգրկի ընտրա-



կան գործընթացի բոլոր այնպիսի խախտումներն ու խնդիրները, որոնք կարող են ազդեցություն ունենալ ընտրությունների և/կամ քվեարկության արդյունքների վրա:

### 1.1. 7.2. Բողոքարկման գործընթացների արդյունավետության երաշխավորում.

- **Ընտրական վեճերով վարչական դատավարական հատուկ ընթացակարգերի մասով.**

Ընտրական իրավունքի պաշտպանության, ընտրական վեճերով արդյունավետ քննության իրականացման և ընտրությունների արդյունքների վրա ազդեցությունների արդարացի գնահատման երաշխավորման և ապահովման նպատակով անհրաժեշտ են համակողմանի և համակարգված միջոցառումներ, ինչպես օրենսդրական, այնպես էլ՝ իրավակիրառ դաշտում:

Անհրաժեշտ է Վարչական դատավարության օրենսդրության այնպիսի փոփոխություն, որը վարչական դատարանում հատուկ վարույթի ընթացակարգերի վերանայման արդյունքում հնարավորություն կտա կիրառել այնպիսի ընթացակարգեր, որոնք և կապահովեն իրավունքների լիարժեք իրացում դատավարական գործընթացում և կապահովեն այդ վարույթների հետ կապված սեղմ ժամկետներում վեճերի լիարժեք քննություն ու լուծում, և որպես հետևանք կբավարարեն դատարանի մատչելիության իրավունքի պահանջներին: Այս առումով անհրաժեշտ են հատուկ վարույթի առանձնահատկություններով պայմանավորված ոչ ստանդարտ լուծումներ, այդ թվում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ (ըստ անհրաժեշտության):

### 1.2. 7.3. Դիտորդների իրավունքների մասով.

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով պետք է ապահովվի հստակ և այնպիսի ընդգրկում

պատասխանատվություն, որը կընդգրկի խախտումների վերաբերյալ դիտորդի, կամ վստահված անձի դիտարկումը տեղամասային հանձնաժողովի գրանցամատյանում ոչ պատշաճ, ոչ լիարժեք և ոչ բոլոր դեպքերում գրանցելու դեպքերը:

Սույն զեկույցում նկարագրված փաստերն ակնհայտ են դարձնում, որ ընտրական օրենսգրքի փոփոխությունների կապակցությամբ հանձնաժողովների անդամների վերապատրաստումը բավարար և պատշաճ որակի չի եղել, ինչի հետևանքով էլ արձանագրվել են սույն զեկույցում նշված որոշ ընթացակարգային խախտումներ: Ուստի, անհրաժեշտ է ձևավորել և ապահովել այնպիսի արդյունավետ վերապատրաստումների և որակավորման համակարգ, որը կերաշխավորի հանձնաժողովի անդամի բարձր որակավորումը: